

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՆՉԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Զկա՛յ, կեանքն ազգին ու հայրենիքին պատարագելու չափ մեծ երջանկութիւն չկա՛յ աշխարհում:

Գարեգին Նժդեհ

Գարեգին Նժդեհ՝ մեզ հասած բանտային նամակներին, բանտից գրած նրա դիմումներին, ինչպէս նաև հարցաքննութիւնների արձանագրութիւններին ու այլ փաստաթղթերին (1944-1955 թթ.) ծանօթանալուց յետոյ որեւէ կասկած չի մնում, որ նշուած նիւթերը ոչ միայն Գարեգին Նժդեհի կենսագրութեան, այլև հայոց պատմութեան 1919-1947թթ., յատկապէս 1933-1953 թթ. ժամանակաշրջանի քիչ յայտնի դէպքերի կարեւորագոյն աղբիւրներից են: Այդ նիւթերին ծանօթանալուց յետոյ աներկբայելի է դառնում, որ 1930-1940-ական թթ. հայօտար քաղաքական բազմակողմանի շփումների գլխաւոր դէմքերից մէկը, եթէ ոչ առանցքայինը, Գարեգին Նժդեհն էր:

Նրան սովետները հիմնականում մեղադրել են Լեռնահայաստանի ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու եւ Գերմանիայի հետ ռազմաքաղաքական ու հետախուզական գործակցութեան համար:

Փայլուն կերպով պաշտպանելով իր իրաւունքները, Նժդեհը անհերքելի փաստերով ապացուցում է իր դէմ ուղղուած ամբաստանութիւնների ու մեղադրանքի անհեթեթութիւնն ու անհիմն լինելը, մատնանշում, որ ինքը Զանգեզուրում կռուել է երկրամասը հայասպան թուրքերից ազատագրելու համար եւ սովետների դէմ իր ինքնապաշտպանական գործողութիւններին հիմք են տուել բոլեւիկները՝ միանալով Արցախ-Զանգեզուր-Նախիջեւանի հայութեանը բնաջնջելու, Հայաստանի այդ տարածքները Աղբբէջանին եւ Թուրքիային կցելու պանթուրքական ծրագրերին: Բայց այդ՝ անկախ իր կատարած կամ չկատարած «յանցագործու-

թիւնների», սովետներն իրաւունք չունէին Զանգեզուրի լնքնապաշտպանութեան համար նրան դատի տալու, քանի որ Հայաստանի Յեղկոմն իր 1921 թ. ապրիլի 23-ի դեկրետով, որի տակ ստորագրել էին Ս. Կասեանն ու Ասք. Մռաւեանը, պաշտօնապէս յայտարարում էր.

«1. Ազատ համարել Քաղաքական ամեն տեսակի եւ ձեւի պատասխանատութիւնից առանց բացառութեան բոլոր նրանց, ովքեր որեւէ կերպ պայքարել են Հայաստանի. Ս. Խ. Հանրապետութեան դէմ՝ անկախ նրանց անմիջական գործերից, կոչումից, դիրքերից, պաշտօնից:

2. Բոլոր այս Քաղաքացիններին վերահաստատել իրենց ամբողջ իրաւունքների մէջ:

3. Պարտաւորեցնել Հ. Ս. Խ. Հանրապետութեան բոլոր գօրական եւ Քաղաքացիական հիմնարկութիւններին ու պաշտօնեաններին՝ անյապաղ ու անշեղ գործադրել ներկայ դեկրետը՝ ազատելով վերոյիշեալ Քաղաքական գործիչներին ու Քաղաքացիններին ինչպէս բանտարկութիւնից, կալանքից եւ աքսորից, նոյնպէս եւ այլ տեսակի որեւէ հետապնդումից»¹:

Հեռնահայաստանը պարպելու շուրջ իր եւ Խ. Հայաստանի ներկայացուցիչների միջեւ տեղի ունեցած բանակցութիւնների արդիւնքում, Խ. Հայաստանի ղեկավարութիւնը իր 1921 թ. յունիսի 13-ին Հրապարակած յայտարարութեամբ, որի տակ ստորագրել էին Խ. Հայաստանի Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Ալ. Միասնիկեանը եւ կոմիսարներ Պ. Մակինցեանը, Ալ. Բէկալպեանը, Ս. Լուկաշինը ու Արտ. Կարինեանը, Վերահաստատում է Զանգեզուրի պաշտպանութեան բոլոր մասնակիցներին անխտիր համաներում շնորհելու յիշառակուած դեկրետը՝ նշելով. «Միաժամանակ, Զանգեզուրում կը գործադրուի ամենալավ վեռականութեամբ ընդհանուր Քաղաքական ներման այն կառավարութեան դէմ կոռուող բոլոր գործիչները ո՛չ միայն ազատ կը լինեն որեւէ հալածանեից, այլև կարող են անարգել մնալ Զանգեզուրում»²:

¹ Հայաստանի Ազգային Արխիվ (այսուհետեւ ՀԱԱ), ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 142, հմտ. ՄԻՄՈՆԵԱՆ Ա., Զանգեզուրի գյումարտը, 1920-1921 թթ., Երեսն, 2000 թ., էջ 480.

² Գ. ՆԺԴԵՀ, Խմ պատասխանը, Երկեր. հա. 2, էջ 243.

Հնդհանրապէս պէտք է նկատի առնել, որ առանց Զանգեթիւնը 1919-1921 թթ. պատմութեանը վերաբերող Նժդեհի յօդուածները, վկայութիւններն ու վերլուծականներն օգտագործելու, անհնար է գրել այդ երկրամասի նշուած ժամանակաշրջանի քաղաքական, տնտեսական, ռազմական ու ընկերային ճշգրիտ ու անաչառ պատմութիւնը:

Է՛լ աւելի արժէքաւոր են 1939-1944 թթ. վերաբերող նիւթերը, որոնց կարեւորութիւնը բազմապատկում է՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ երկրորդ աշխարհամարտի բռնկումից յետոյ պատերազմող կողմերի նկատմամբ սփիւռքի դիրքորոշումների գիտական մեկնաբանութիւնը պատմագիտութեան առաւել քիչ ուսումնասիրուած խնդիրներից է:

Մեր պատմագիտութիւնը (յատկապէս խորհրդայինը) քննելով Բ. աշխարհամարտի ընթացքում հայ քաղաքական ուժերի դիրքորոշումները, եկել է այն եզրակացութեան, թէ դրանք երկուսն էին. մի մասի հետեւորդները Գերմանիայի պաշտպաններն էին, միւս մասը՝ սովետների ու նրանց դաշնակիցների կողմնակիցները: Այդպիսի դիրքորոշումը անտեսում է հայ ազգային-քաղաքական շահը, եւ մեր ժողովրդին արհեստականորէն բաժանում երկու հակամարտ խմբերի կողմնակիցների՝ սովետամէտների եւ գերմանամէտների, ինչը պատմական փաստերի ու իրողութիւնների խեղաթիւրում ու անտեսում է:

Մինչդեռ իրականութիւնը հետեւեալն է. Խորհրդային Հայաստանի իրաւագործիկ ու ըստ էութեան բանտարկեալ բնակչութիւնը բացառում է, որ նշուած ժամանակաշրջանում ապատօքէն արտայայտէր իր անաչառ կարծիքը: Մնում էր գաղթաշխարհը, որի ազգային կառույցներն ու քաղաքական միտքն իր ամբողջութեան մէջ մեծաւ մասամբ մէկ խնդիր էր դնում իր առաջ. ինչպէս անել, որ հայութիւնը եւ Հայաստան կոչուած իրաւագործիկ, պէս անել, որ հայութիւնը եւ Հայաստան կոչուած իրաւագործիկ, ըայց հայ բնակչութիւնը ունեցող տարածքը ոտքի տակ չգնայ համաշխարհային պատերազմի բոցերի մէջ:

Աւանդական կուսակցութիւններից հնչակեաններն ու ռամկալարները պատերազմի սկզբին պաշտպանում էին Անդլիային եւ Ամերիկային³, սակայն ռազմաճակատում տեղի ունեցած բե-

³ Տե՛ս Գ. Նժդեհի 1944 թ. գեկտեմբերի 4-ի հարցաքննութեան արձանագրութիւնը, ՀՀ կառ. առընթեր Ազգային անվտանգութեան ծառայութեան դիւնան, կարճուած գործերի ֆոնդ (այսուհետև՝ ԱԱԾԴ, կ. գ. Փ., 12997 կամ Նժդեհի գործ), հու. 3:

կումից յետոյ հայ ժողովրդի ապահովութիւնը տեսնում էին սովետների յաղթանակի մէջ:

Պատերազմի մկզբում, երբ Գերմանիան յաղթում էր բոլոր ճակատներում, դաշնակցութիւնը եւս ձգտում էր կապեր հաստատել այդ երլրի հետ: Ցետագյուռմ, Գերմանիայի պարտութեան նախաշեմին, դաշնակցութիւնն իր կապերն աւելի սերտացրեց Անգլիայի եւ ԱՄՆ-ի հետ՝ ակնկալելով նրանց նպաստը հայկական հարցում (սովետների հետ ՀՅԴ-ի շփուկու հնարաւորութիւններն աննշան էին):⁴

Գարեգին Նժդեհն այդ խնդրում եզակի ու դժուարին մի ճանապարհ է հաղթել: Իր գործողութիւնների սեւեռուն տրամաբանութեամբ ու մեկնակէտով նա տարբերուում էր բոլորից: 1934 թ. սկսած՝ լինելով սփիւռքի ամենահեղինակաւոր ու ազդեցիկ դէմքը, իսկ 1937 թուականից, իբրեւ տարօնականների ղեկավար եւ սփիւռքահայերի անկուսակցական հաստուածի համընդունելի առաջնորդը, նա կարողացել էր իր անսովոր հմայքով ու պատկառանք ու յարգանք ներշնչող էութեամբ յաջող բանակցութիւններ ունենալ տարբեր երկրների ու ժողովուրդների ներկայացուցիչների հետ՝ հայութեանը ներկայացնելով որպէս առանձին միաւոր, այլ ոչ թէ պատերազմող կողմերից մէկին սատարող ոյժ:

Հայ ժողովրդի տեղը այդ թոհուրոհում ապահովելու նպատակով, Նժդեհը տարօնականութիւն շարժման հիման վրայ 1938-1939 թթ. հիմնել էր աւելի քան 2500 անդամ ունեցող հայկական համաշխարհային կազմակերպութիւն՝ «Հայկական իներենտա», որը մասնաճիւղեր ուներ Բալկաններում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Յունաստանում, Իրանում, Սիրիայում, Լիբանանում, Եգիպտոսում, Իրաքում, Թուրքիայում եւ այլ երկրներում:⁵

Երկրորդ աշխարհամարտի բռնկումից յետոյ Հայկական իուեղենտայի ներսում Նժդեհը ստեղծել էր ազգային հետախուզութեանտառայի 4. Նժդեհի 1944 թ. գեկտեմբերի 4-ի հարցաքննութեան արձանագրութիւնը, Նժդեհի գործ, հտ. 3, էջ 105:

⁴ Իտալիա irredenta բառերից: Շարժում, որ իտալացիները 1878 թ. հիմնել էին իտալիայի մէջ չմտած, բայց իտալիային պատկանող ասհմանակից տարածքները վերամիաւորելու նպատակով:

⁵ Գ. Նժդեհի 1946 թ. գեկտեմբերի 12-ի հարցաքննութեան արձանագրութիւնը, քննիչներ՝ գնդապետ Հարովիկն (Հայաստանի Պետանվտանգութեան փոխնախարար) եւ մայոր Ա. Գրիգորեան, Նժդեհի գործ, հտ. 2, էջ 45-49:

թիւն ու հակահետախուզութիւն, իսկ Գերմանիայի զօրքերի կազմում՝ 30 հոգիանոց լաւ վարժուած ջոկատ, որը նախատեսուած էր, որպէսզի գերմանացիները թրակիայում օգտագործէին թուրքիայի դէմ, իսկ գերմանացիների՝ թուրքիա ներխուժելու պարագային ջոկատը պիտի դառնար Հայաստանը թուրքիայից ազատագրելու նպատակով յետագայում ստեղծուելիք հայկական ռազմական ստորաբաժանումների առաջապահը։ Նա այդ նոյն, զուտ հայկական խնդիրների համար կռուող զօրամաս էր ուզում տեսնել նաև Դրոյի վերահսկողութեան տակ գերմանացիների ստեղծած «Հայկական լէգէնները»։

Ունենալով ժամանակաւորը յաւիտենականին զոհաբերելու տեսանողին, մարգարէին ու առաքեալին յատուկ աստուածատուր ունակութիւններ, նա իր գործողութիւնները կառուցում էր հիմք, մեկնակէտ ու խարիսխ ունենալով Հայաստանի ու Հայութեան գերագոյն շահերի ի՞ր ըմբռնումը, որն ունէր մէկ անուն եւ ուղղութիւն։ առաւելագոյնը՝ թուրքահայաստանը ազատագրելով ու Խ. Հայաստանին միացնելով, վերականգնել հայոց անկախ պետականութիւնը։ նուազագոյնը՝ զօրացնել, տարածքով ընդարձակել թէկուզեւ թղթի վրայ եւ իրաւագուրկ, բայց Հայաստան կոչուող այդ հողակտորը։

Իր սեւեռուն նպատակն իրագործելու ճանապարհին նա, իրերեւ անկուսակցական չչզգք գործիչ, երկրորդ աշխարհամարտի բռնկումից անմիջապէս յետոյ սկսել է շփումներ փնտրել միաժամանակ թէ՛ Գերմանիայի, եւ թէ՛ սովետների հետ, որոնք պատերազմի սկզբից մինչեւ 1941 թ. գարուն, մօտ մէկուկս տարի Ռիբենտրոպ-Մոլոտով դաշխնքով Եւրոպան բաժանել էին ազգեցութեան ոլորտների, բարեկամական յարաբերութիւններ ունէին իրար հետ եւ համարւում էին դաշնակիցներ։

Ի դէպ, պատերազմի սկզբին սովետների հետ կապեր հաստատելու նժդեհի գործողութիւնների մասին ցարդ մենք որեւէ փաստ չունէինք։ Այդ իրողութիւնը հաստատում են առաջին անգամ սոյն ժողովածոյում հրապարակուող փաստաթղթերը եւ նժդեհի վկայութիւնները։ Այսպէս։ 1944 թ. հաւանաբար հոկտեմբերին իսրարդային բանտում գրած իր բացատրագրերից մէկում նժդեհը նշում է. «Սովիայում գերմանական հաստատութեան դեկավար դոկտոր Դուլի միջոցով մենք դիմեցինք գերմանացիներին՝ խնդրելով թուրքիայի դէմ պատերազմի դէպում հովանաւորել հայերին եւ Խորհրդային Միութեան կառավա

բութեանը խնդրել, որպէսզի նա կովկասում ամրացնի հայերի դիրքերը։ Այդ նոյն նպատակով պրոֆ. Բելովի, դոկտոր Սակարովի, զօրավար Արտիշեևսկու եւ Գ. Կիրովի միջոցով փորձեցինք կապ հաստատել նաեւ Սոֆիայում խորհրդային դեսպանատան հետ։ Անսպասելի բռնկուեց սովետա-գերմանական պատերազմը, եւ հայերի համար վտանգաւոր դրութիւն ստեղծուեց»⁷։

Մէկ այլ տեղ Նժդեհն աւելի է յստակեցնում իր նպատակը. «Պատերազմի սկզբում Սոֆիայի խորհրդային դեսպանատան հետ կապ հաստատելու իմ փորձերը թելադրուած էին իմ՝ միակ ցանկութեամբ. Խորհրդ. Հայաստանի սահմանների ընդայնումը։ Այդ նպատակով ես ուզում էի ինքզինքս ամրողովին դնել խորհրդ. հրամանատարութեան տրամադրութեան տակ... Պատերազմի հենց առաջին իսկ օրը ես ինձ դրեցի Բուլղարիայի ուզմական նախարարութեան տրամադրութեան տակ՝ առաջարկելով Թուրքիայի դէմ պատերազմի դէպքում օգտագործել իմ հնարաւորութիւնները»⁸։

Փաստորէն Նժդեհը հայ միակ քաղաքական գէմքն էր, որը պատերազմի սկզբում չփումներ է փնտրել միաժամանակ թէ՝ Գերմանիայի եւ թէ՝ սովետների հետ՝ ունենալով մէկ նպատակ. հասնել այն բանին, որպէսզի գերմանա-սովետական դաշինքի խնդիրներից մէկը լինէր Թուրքիայի մասնատումը Գերմանիայի եւ սովետների միջեւ։ Այն է՝ Արեւմտահայաստանի միաւորումը Խորհրդային Հայաստանին, որը 1944-1949 թթ. դարձաւ հայ ժողովրդի բոլոր հատուածներն իրար միաւորող եւ մէկ ամբողջութիւն դարձնող քաղաքաւ եւ դործունէութիւն։ Այսինքն՝ Նժդեհը 1939-40 թթ. մատնանշեց մի ճանապարհ, որին հինգ-վեց տարի յետոյ միացաւ ամբողջ հայութիւնը։

Ահա այս խնդրի լուծման համար Նժդեհը բազմակողմանի ու բազմաբովանդակ քաղաքական գործունէութիւնն է ծաւալում ոչ միայն սովետների ու գերմանացիների հետ, այլ նաեւ վրացի եւ կովկասցի այլ վտարանդիների մէջ, անշուշտ նաեւ յոյն եւ բուլղար քաղաքական շղանակներում։ Ամենաանսպասելին եւ եղարքութար քաղաքական շղանակներում։

⁷ Նոյն տեղը, հտ. 4։

⁸ Նոյն տեղը, հտ. 4։

⁹ Տե՛ս ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ Ռ., Գարեգին Նժդեհ, Համառօտ կենսագրական, ասոյթներ եւ կենսատարեգրութիւն, Երեւան, 2003 թ., էջ 26-27։

կիորէն անըմբռնելին այն է, որ նա, ինչպէս կը տեսնենք ստորեւ, նոյն գործունէկութիւնը, միեւնոյն մեկնակէտով՝ ու ծաւալով շարունակում էր խորհրդացին տանջարաններում՝ յանուն եւ ի խնդիր լուսաւոր հեռուի վերացրկուելով՝ սոսկալի իրականութիւնից, անտեսելով վկայի ու մարտիրոսի էր չարչարանքները:

Գ. Նժդեհը, որը անիրատեսական ու սիալ էր համարում 1930-ականներին սկիզբ առած «Պրոմեթեւս» շարժումը (դրա նպատակը սովետների դէմ Կովկասի վտարանդի ուժերի դաշինքն էր), Բ. աշխարհամարտը սկսուելուց անմիջապէս յետոյ, փորձում է բալկանեան ժողովուրդների դաշինք ստեղծել Թուրքիայի դէմ¹⁰:

1941 թ. յետոյ, երբ Գերչիլը Անգլիան գերմանա-սովետական դաշինքից փրկելու համար կարողացաւ այդ երկու երկրները հանել իրար դէմ, Նժդեհը համագործակցում էր գերմանացիների հետ, քանի որ Գերմանիան այդ շրջանում յաղթում էր բոլոր ճակատներում: Սակայն Գերմանիայի հետ Նժդեհի համագործակցութեան մեխը ոչ թէ սովետների դէմ զինուած պայքարն էր, այլ Թուրքիայի հանդէպ անվստահութիւն սերմաննելու ճանապարհով գերմանա-թուրքական դաշինքի վիժեցումը, որով հնարաւոր էր Թուրքիային զրկել Հայաստանի վրայով Կովկաս արշաւելու պանթուրքական նկրտումներից:

Այդ ծրագրի նպատակներից մէկն էլ հետեւեալն էր. կանխել գաղութակայութեան գլխին կախուած՝ հրեաների ճակատագլին ենթարկուելու վտանգը, օգնել հայ ռազմագերիներին եւ վերջապէս հիմնականը՝ Այսրկովկասը գերմանացիներից նուանուելու պարագայում ոչ միայն կանխել Թուրքիայի հնարաւոր ներխուժումը Խորհրդացին Հայաստան, այլև հնարաւորութեան դէպքում՝ վերականգնել Հայաստանի անկախութիւնը: Այդ նկատառումներով նա մաս է կազմում 1942 թ. գեկտեմբերի 15-ին Բեռլինում գերմանացիների ստեղծած Հայոց Ազգային խորհը թին (գործել է մինչեւ 1943 թ. նոյեմբեր), որի նախագահը Բեռլինի Հումբուլդտի համալսարանի ուսուցչապետ Արտաշէս Աբեղեանն էր, փոխնախագահը՝ Աբրահամ Գիւլիսանդանեանը, անդամները՝ Ալֆրէդ Մուրադեանը, Դաւիթ Դաւիթիսանեանը, քար-

¹⁰ Տե՛ս Գ. Նժդեհի 1944 թ. գեկտեմբերի 4-ի հարցաքննութեան արձանագրութիւնը, Նժդեհի գործ, հատ. 1:

տուղարը՝ Յարութիւն Բաղդասարեանը¹¹: Գ. Նժդեհը նշանակուեց Ազգային խորհրդի «Ազատ Հայաստան» պաշտօնաթերթի փոխ-խմբագիր (խմբագիր՝ Աբրահամ Գրիլիսանդանեան):¹²

Սակայն, երբ Գերմանիայի յաղթարշաւի կասեցումից յետոյ գերմանաթուրքական զինակցութեան վտանգը վերացաւ, Նժդեհը 1943 թ. հրաժարուեց Գերմանիայի հետ համագործակցութիւնից: Աւելին՝ գերմանական զօրքերի համատարած նահանջից յետոյ, երբ ռազմաճակատի գիծը մօտեցաւ Արեւելեան Եւրոպային, Նժդեհը սկսեց համագործակցութեան եզրեր փնտրել սովետների հետ, որոնք թուրքիա ներխուժելու իրենց մտադրութիւնը միջ-ազգային հանրութիւնից չէին թաքցնում:

Դրանեւորելով անսովոր, անբաղդատելի ու այդ ժամանակնե-րի համար անըմբռնելի քաղաքական գիրքորոշում, նրա վերացարկող միտքը կանխատեսում էր, որ խորհրդային բռնապետութիւնը ժամանակաւոր երթոյթ է, ուստի անհրաժեշտ է վեր կանգնել անցողիկ իրականութիւնից ու տեսնել անխուսափելի գալիքը՝ ըստ ամենայնի օգնել, որպէսզի ծաւալապաշտական նըկըրտումներով մերձաւոր Արեւելքը ձգտող կոմոնիստական կայութիւնը Արեւմտահայաստանը կցի Խորհրդային Հայաստանին: Ընդ որում Նժդեհը դիտարկուող ըրջանում Արեւմտահայաստանը Հայաստանին կցելու խնդրում ԱՄՆ-ի եւ Անգլիայի գերակատարութիւնը անիրական էր համարում կարծելով որ Արեւմուտքը նման քայլերին ոչ թէ կ'օգնի, այլ ըստ ամենայնի կը խոչընդոտի՝ թուրքիայի շահերը պաշտպանելու անուան տակ սովետների ծաւալապաշտութիւնը տարածաշրջանում չէզոքացնելու համար:

Ձգտելով կրկնել 1914 թ. իր քայլը (այն ժամանակ Նժդեհը ուսւ պետութիւնից թոյսուութիւն ստացաւ վերադառնալ Կովկաս եւ կրուել թուրքիայի դէմ), Նժդեհը խորհրդային զօրքերի թուլղարիա ներխուժելուց անմիջապէս յետոյ, 1944 թ. սեպտեմբերի 9-ի նամակով նրանց առաջարկում է թուրքիայի դէմ նաբերի համար մեկնել նկատառութեան իր մասնակցութիւնը: Սովետները նրան յորդորում են իր նկատառումները անձամբ կենտրոնին ներկայացնելու համար մեկնել Մոսկովա: Սակայն նախապէս

¹¹ Նժդեհի 1944 թ. հոկտեմբերի 21-ի հարցաքննութեան արձանագրութիւնը, Նժդեհի գործ, հոմ. 1, էջ 70-73; 1944 թ. նոյեմբերի 4-ի արձանագրութիւնը, հոմ. 1, էջ 89: «Թազմիկ» թերթ Սօֆիա, շաբաթ, 23 յունուարի, 1943 թ., էջ 2:

¹² «Ազատ Հայաստան» ամսաթերթ, Բեռլին, 1943 թ., թիւ 1, 2-3:

արձակած լինելով նրան ձերբակալելու հրաման, խորհրդային ՍՄԵՐՇ (ռուսերէն «սմերտ շպիոնամ» (մահ լրտեսներին) բառերի յապաւումը) հակահետախուզական ծառայութիւնը բուլղարական ոստիկանութեան կողմից ձերբակալուած Նժդեհին 1944 թ. հոկտեմբերի 10-ին ՍՄԵՐՇ-ի աշխատակից իլեա Բեգլարեանի ուղեկցութեամբ Բուխարեստի եւ Կրակովի¹³ վրայով օդանաւով փոխադրում է Մոսկուա, նետում Լուբեանկայի բանտը: Այնուհետեւ, բազմապիսի խոշտանգումների ուղեկցութեամբ, 1944 թ. հոկտեմբերից մինչեւ 1946 թ. նոյեմբեր Մոսկուայի եւ 1946 թ. նոյեմբերի 14-ից¹⁴ մինչեւ 1948 թ. մարտ ամիսը՝ Երեւանի բանտերում բազմաթիւ հարցաքննութիւններից յետոյ (մօտ 30 հարցաքննութիւն Մոսկուայում, 80-ը՝ Երեւանում) յենուելով պետանվտանգութեան մարմինների սարքած գործի վրայ, հակասովետական գործունէութեան եւ Գերմանիայի հետ համագործակցելու մեղադրանքներով 1948 թ. ապրիլի 24-ին նրան դատապարտում են 25 տարուայ բանտարկութեան:

Ստալինին գրած իր 1948 թ. յունուարի 10-ի նամակը ուրեւէ կասկած չի թողնում, որ սովետները Նժդեհին Բուլղարիայում, իրօք, համագործակցութիւն են խոստացել ամենաբարձրագոյն զեկավարութեան՝ Ստալինի անունից, բայց յետոյ հէնց այդ իսկ զեկավարութեան ցուցումով էլ նրան բանտարկել են: «Ես երկու բանի չեմ սպասում,- գրում է Նժդեհն այդ նամակում, - Առաջին՝ որ այն բանից յետոյ, երբ խորհրդային իշխանութիւնների հետ ընդհանուր լեզու գտնելու նպատակով մնացի Սոֆիայում, ինձ կը ձերբակալեն. եւ երկրորդ՝ որ ինձ դատի կը տան:

¹³ Տե՛ս Սամուել Միրզոյեանի վկայութիւնը, «Նախիջեւան» պարբերաթերթ, 2004 թիւ 26, նաւասարդ (յունուար), թիւ 26, էջ 9.

¹⁴ Տե՛ս Նժդեհի «դատաքննութիւնը վերսկսելու մասին» ՀԽՍՀ Պետանվտանգութեան նախարարութեան առաջին բաժնի պետ [Հ]Արոյեանի 1946 թ. նոյեմբերի 16-ի որոշումը. «Երեւան, 1946 թ. նոյեմբերի 16. Ես ՀԽՍՀ Պետանվտանգութեան նախարարութեան առաջին բաժնի պետ Արոյեանը, քննելով Տէր-Յարութիւննեանի թիւ 8386 գործը գտայ, որ նրա Երեւանում չգլունուելու պատճառով գործի քննութիւնը դադարեցուած էր: Նկատի ունենալով այն հանդամանքը, որ նա 1946 թ. նոյեմբերի 14-ին ժամանել է Երեւան, ՈՐՈՇՈՒՄ ԵՄ այսօրուանից վերակեն Տէր-Յարութիւննեանի քննական թիւ 8386 գործը: Փոխգնդապետ [Հ]Արոյեան», Նժդեհի գործ, հոդ. 1, էջ 248.

Դատական օրէնսգրքերի հետ միասին ու դրանցից աւելի վեր՝ կայ ասպետութեան չգրուած օրէնք, որը անտեսելու դեպքում վերանում է ամէն մի վստահութիւն մարդկանց եւ ժողովուրդների միջեւ:

Զի կարելի իմ կատարած ասպետական բայլի հոգեբանութիւնը վերլուծել եւ մերժել արդարութիւնն իմ նկատմամբ... Զեմ կարծում թէ մեծ է եղել այն մարդկանց թիւը, ովքեր իրենց պահեցին ինձ նման... Զենոանալով Սոֆիայից, ես ցոյց տուեցի բարձր հայրենասիրութիւն եւ Խորհրդային իշխանութեան հետ հաշոտելու անկեղծ ցանկութիւն:

Ես մնացի՝ վստահելով Ձեզ...

Հաւատում եմ, որ իմ ասպետութեանը կը պատասխանեն ասպետութեամբ»:

Նժեհը գրելով. «Ես մնացի՝ վստահելով Ձեզ», նկատի ունի հնաց այն հանգամանքը, որ իրեն Սոֆիայում ¹⁵ խոստումներ են տուել Ստալինի անունից:

Իր Զերբարկալութիւնից յետոյ կինը եւ զաւակը 1945 թ. գարնանը Սոֆիայից աքսորւում են Բուլղարիայի Պավլիկինի քաղաքը, ուր 1958 թ. փետրուարի 24-ին թոքախտից մահանում է էփիմէն: Սուքիաս-Վրէժ Տէր-Յալութիւնեանը 1960 թ. բանակից զօրացրուելուց յետոյ բնակուել է Սոֆիայում, եւ որպէս Նըժեհի որդի, մինչեւ 80-ական թթ. կէսերը անընդհատ հալածուել է իշխանութիւններից¹⁶: Նժեհը 1948 թ. օգոստոսի սկզբից մին-

¹⁵ Այս փաստը լծորդելով հարցաքննութիւնների ընթացքում Նժեհի տուած այն ցուցմունքին, թէ նա խորհրդային զօրքերի Բուլղարիա ներխուժելուց անմիջապէս յետոյ նրանց առաջնորդել է Թուրքիայի դէմ նախապատրաստուող ռազմաշահակին իր մասնակցութիւնը, իսկ սովետներն իրեն պատաստուող ռազմաշահակին իր մասնակցութիւնը անձամք կենտրոնին ներկայացնելու հայտնել են, թէ իր նկատառումները անձամք կենտրոնին ներկայացնելու հայտը նա պէտք է մեկնի Մոսկուա, մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ Նըժեհը Մոսկուայում հանդիպել է ոչ միայն Պետանվտանգութեան նախարար Աբամումովին, որը փաստաթղթերով հաստառուած իրողութիւն է, այլ հաւանաբար նաեւ Ստալինի հետ: Սոյն ենթադրութեան օգտին անուղղակի կրուան կարելի է դիմէլ Տէր-Յալութիւնեանների ընտանիքում սերնդէսեկունդ աւանդաբար փոխանցուած այն պնդումները, թէ Լեւոն եղբօր պատրունի Նժեհըն իրը կրեմլում հանդիպել է Ստալինին:

¹⁶ ԱՐՄԵՆ ՍԵՒՄՆ, Բանտարկեալի մը յուշերը, էջ 110. նաեւ՝ Գ. Նժեհը՝ 1955 թ. գեկտեմբերի 1-ի նամակը եղբօր աղջկան, ուր գրում է, որ իր կնոջն թէկտեմբերի 1-ի նամակը եղբօր աղջկան, ուր գրում է, որ իր կնոջն

չեւ 1952 թ. մարտ ամիսը մնացել է Վլադիմիրի բանտում, 1952 թ. մարտի 6-ին կրկին փոխադրուել է Երեւանի բանտ ու մնացել 1952 թ. մարտի 16-ից մինչեւ 1953 թ. ամառը¹⁷:

1953 թ. ամռանը նրան դարձեալ տարել են Վլադիմիրի բանտ¹⁸:

Տարբեր ժամանակներում եղել է Մոսկուայի Բուտիրկա, Լեֆորտովո, Կրասնայա Պրեսնեա բանտերում, Երեւանից Վլադիմիրի բանտ տեղափոխուելիս կարճ ժամանակով մնացել է Բաքուի, Սարատովի, Սամարայի (այն ժամանակ՝ Կոյքիշեւ), Ռոստովի բանտերում, մահուանից առաջ մօտ մէկ տարի պահուել է Տաշքենդի բանտում եւ բանտավին հիւանդանոցում: 10 տարի շարունակ նրան թոյլ չեն տուել ո՛չ նամակ գրի, ո՛չ ստանայ: Առաջին նամակը թոյլատրել են գրել միայն 1954 թ. մայիսի 5-ից՝ սկզբում ամիսը մէկ, յետոյ ամիսը 4 անգամ¹⁹:

Դիւանական փաստաթղթերը ցոյց են տալիս, որ գեռեւս 1947 թ. մայիսի 25-ի դրութեամբ նրա առողջութիւնը լրջօրէն խաթարուել էր մէկ տասնեակի չափ հիւանդութիւններից:

1952 թ. մարտի 25-ի բժշկական եզրակացութեան մէջ, որը ստորագրել են Հայաստանի Խորհրդային Սոց. Հանրապետութեան Պետանիւմանդութեան նախարարութեան սանիտարական բաժնի պետ, փոխնորապետ Մ. Մելիք-Փաշաեւը, նոյն նախարարութեան բուժարանի ու սանիտարական բաժնի նեւրոպատոլոգ, Կապիտան Ա. Զմշկեանը, Պետանիւմանդութեան նախարարութեան ներքին բանտի բժիշկ Գ. Օկոնեւը, նշում է «Կպանաւոր Գ. Ե. Տէր Յարութիւննեանի գանգատները. ընդհանուր բուլութիւն, մշտական գլխացաւեր՝ յատկապէս ամեն տեսակի ֆիզիկական շարժումների ժամանակ, յիշողութեան կորուստ, բարքելիս՝ աչքերի առջեւ սեւ շրջանակներ, ոտքերի ու ձեռքերի՝ մեծ աչքերի առջեւ սեւ շրջանակներ, ոտքերի ու ձեռքերի՝ մեծ մասամբ ձախ ոտքի ցաւեր, բայլելիս կորցնում է հաւասարա-

ու որդուն այդ քաղաքում են պահում ահա արգէն 11 տարի. Ռ Ղափմեանի հարցագրոյցը Վլադ-Սուքիս Տէր-Յարութիւննեանի հետ, «Ազատամարտ» շաբաթաթերթ, 1993 թ., յուլիս, թիւ 28, էջ 14:

¹⁷ ԱՐՄԵՆ ՍԵՒԱՆ, Բանտարկեալի մը յուշերը, էջ 101, 107; Յ. ՕՎԵԾԵՅ, Հյուծ և ԿՀԲ (այուհետեւ ՅՈՎՍՔԻՖԵԱՆ Վ., նշ. աշխ.), Երեւան, 2001 թ., էջ 57, 96, 178:

¹⁸ ԱՐՄԵՆ ՍԵՒԱՆ, էջ 121-122:

¹⁹ ՏԵ՛ս այդ նամակը, որը գտնուում է Զաքարեանների ընտանեկան գիւանում:

կշռութիւնը, ականջների մէջ աղմուկ, ձախ ականջը վատ է լըսում, լեղապարկի ու փայծաղի շրջանում ցաւեր, տագնապահ ֆուն, առաւօտեան արքնանում է ուժեղ գլխացաւերով: Սրտի եւ ձախ ձեռքի մշտակայ ցաւեր, ձախ ձեռքի դողոց: 1914 թ. հիւանդացել է բծաւոր տիֆով եւ տուրերկուլեոզով, իսկ 1912 թ.¹ մալարիայով ու յօդացաւերով:

Ներքին օրգանների հետազոտումից պարզուեց հետեւեալը. 14 ծամող ատամները բացակայում են, մնացած 4 ատամների լնդերը մերկացած են: Թոփերում չոր խոխոցներ, շնչառութիւնը՝ թոյլ, սրտի սահմանը երկու կողմից մեծացել է երկուական մատնաչափ, տոնը շատ խուլ, զարկերակը՝ բոպեում 88, արեան ննշումը՝ 250/100. Փայծաղը մեծացել է երկու մատի չափով, լեղապարկի շրջանը շօշափելիս՝ ցաւուա: Եզրակացութիւն: Բանտարկեալ Գ. Տէր Յարութիւնեանը տառապում է հիպերտոնիայով, ընդհանուր արտեսկերոզով, միոնկարդիսկ-լերոզով, փայծաղի ու լեղապարկի քրոնիկական բորբոքումով, քրոնիկական ուեւմատիզմով ու կոլիտով»²⁰:

Վ. Ցովսէփեանն իր գրքում բերում է Օկոյելի ստորագրութեամբ առաւել ընդարձակ եզրակացութիւնը՝ նշելով, որ տուեալ փաստաթուղթը գործի մէջ է, սակայն նշուած փաստաթուղթը Գ. Նժդէհի գործի 4 հատորներից եւ ոչ մէկի մէջ չկայ:

1954 թ. նրա առողջութիւնն այն աստիճանի էր քայլքայուել մի քանի հիւանդութիւններից, որ բանտային հիւանդանոցը որոշում էր կայացրել նրան վաղաժամկէտ բանտից ազատելու մասին: 1955 թ. յունիսի 16-ի նամակից տեղեկանում ենք. «Երկու օր առաջ ինձ տարան ունետքն եւ պարզուեց, որ ձախ թոքիս վրայ տուրերկուլինոզի բուն կայ... Լինել միաժամանակ հիպերտոնիկ, սկլերոտիկ, սրտային ու բռնախտաւոր դա արդէն չափից շատ է»: 1955 թ. օգոստոսի 24-ի մի նամակում գրում է. «Դուք ուզում եք իմանաք ինչ հիւանդութիւններ ունեմ. ահա դրանք՝ երկրորդ կարգի հիպերտոնիա, երկրորդ կարգի սկլերոզ, թոքերի էնֆիզեմա եւ սրտի միոնկարդ: Ձեզ արդէն գրել եմ, որ ակտաւորուած եմ եւ ներկայացուած եմ վաղաժամկէտ ազատման»²¹:

20 ՀՀ կառավ. առընթեր ԱԱ ծառ, գիւտան, Կ.Գ.Ֆ 12997, Նժդէհի գիւտան, հտ. 3, էջ 170.

21 Գ. Նժդէհի 1955թ. օգոստոսի 24-ի նամակը հարսզատներին, գտնուում է Զաքարեանների ընտանեկան գիւտանում:

Բայց ես նախազգում եմ, որ չեն ազատի: Այդ պատճառով խնդրում եմ, եթե դատարանն ինձ չազատի, դիմել ԽՍՀՄ ներքին գործոց նախարարին, որպէսզի ինձ տեղափոխեն Անդրբկովկաս: ինձ, որպէս հարաւոր, այնտեղ հեշտ կը լինի յարմարուել կիմային, շնչել: Այստեղ, Միջին Ասիայում, ես որպէս հիպերտոնիկ եւ սրտային, անընդհատ շնչահեղա եմ լինում»:

Ինչպէս նշուեց, Նժդեհին երկրորդ անգամ Երեւան են բերել 1952 թ. մարտի 16-ին, քանի որ, ինչպէս վկայում է նրա բանտակից Յովհ. Տէվէճեանը, Նժդեհը խորհրդային ղեկավարութեանն ուղղուած դիմումով առաջարկել էր իր միջնորդութիւնը «Դաշնակցութեան եւ խորհրդային իշխանութեան միջեւ հասկացողութիւն մը եւ գործակցութիւն մը ստեղծելու համար»²²: Նժդեհի հիմնաւորումներն այնքան համոզիչ են եղել, որ ՀՀ Պետանկանդութեան կոմիտէի նախագահ, գնդապետ Ա. Կորիմազեանը²³ 1952 թ. սկզբներին ԽՍՀՄ Պետանկանդութեան փոխնախարար Ս. Սաւչէնկոյին յղած նամակում նշում է. «Տէր Յարութիւնեանը մի քանի անգամ մեզ առաջարկել է իր կարողութիւնները՝ թուրքիայի դեմ պայքարի գործում: Նկատի ունենալով արտասահմանի ազգայնական շրջանակներում եւ հայրենակցական միութիւններում նրա բարձր վարկանիշը, կարծում ենք, նա կարող է իրագործել իր առաջարկները՝ օգտագործելով նաև մի շարք արտասահմանեան երկրներում իր ստեղծած ազգայնական Ցեղակրօն ու Տարօնական կազմակերպութիւնները»:

Տէր Յարութիւնեանի կարողութիւնները օգտագործելու միջոցառումների ծրագիր մշակելու համար նպատակայարմար ենք գտնում նրան փոխադրել Հայկ. Խորհրդային Հանրապետութեան Պետանկանդութեան կոմիտէի տրամադրութեան տակ»: Նոյնպիսի մի նամակ Սոսկուա էր յղել նաեւ Հայաստանի պետանկանդութեան նախարար Ղրիմեանը 1947 թ. յունուարի 4-ին²⁴: Այս ինդրի շուրջ Հայաստանի անվտանգութեան նախա-

²² ԱՐՄԵՆ ՍԵՒՍ.Ն, Բանտարկեալի մը յուշերը, Բուէնոս Այրէս, 1970 թ., էջ 107.

²³ Սերդէյ Արկադիի Կորիմազեանը Հայկ. ԽՍՀ Պետանկանդութեան նախարարդէյ էր 1952 թ. մօտաւորապէս Հոկտեմբերից մինչեւ 1953 թ. օգոստոս ամիսը:

²⁴ ՅՈՎԱԿԵՓԵԱՆ Վ., ԱՀ, աշխ., էջ 6-7, 96, Սոյն փաստաթուղթը եւս ՀՀ կառավարութեր ԱԱ ծառայութեան (Կ.Գ.Ֆ 12997) Նժդեհի դիւանում չկայ:

ռարի եւ այլ պաշտօնեաների հետ բազմաթիւ բանակցութիւններից եւ խօսակցութիւններից յետոյ Նժդեհը եւ Դէվէճեանը 1953 թ. մարտի 12-ին Երեւանի բանտից նամակ են գրում Ս. Վրացեանին²⁵: Այդ ժամանակ Գարեգին Նժդեհին կցուած Ազգային անվտանգութեան մարմինների աշխատակիցների բանաւոր վկայութիւնները Յովկ. Տէվէճեանի գրաւոր վկայութիւնների հետ համագրելով պարզում է, որ «խորհրդային իշխանութիւնը տրամադրիլ չէ դաշնակցական որեւէ պատասխանատու մարմինի հետ գործ ունենալ, այլ կը ճգտի պատասխանատու անհատի մը հետ գործ ունենալ»: Նժդեհին 1947թ. Երեւանի բանտում հարցաքըննած, պահեստի փոխգնդապետ Վարդան Մելքոնմոլը (մահ 2003 թ.) վկայում էր, որ Նժդեհին եւ Դէվէճեանին տրամադրել էին թիւ 30 բանտախուցը, ուր լսող սարքեր էին տեղադրել եւ ՀՀ Պետանվտանգութեան նախարարի կամ պատասխանատուների հետ Նժդեհի հանդիպումներից յետոյ լսում, սղագրում էին նրանց խօսակցութիւնները²⁶: Վ. Յովսէփեանն էլ գրում է, որ գաղտնի լսումներից մէկի ժամանակ Նժդեհը Դէվէճեանին ասել է հետևեալը: «Երեւում է այս շները շահագրգոռուած են ո՞չ թէ հայ ազգի նակատագրով, այլ իմ անունը օգտագործելով՝ նպատակ ունեն իրենց մարդկանց խցկել Դաշնակցութեան շարքերը՝ այն քայլայելու նպատակով»²⁷:

Այս եւ մի քանի այլ փաստաթղթեր ցոյց են տալիս, որ սովետներն ամէն դնուի ձգտել են Նժդեհին օգտագործել իրենց նը-պատակին, բայց դա նրանց չի յաջողուել, քանի որ Նժդեհը նը-րանց միշտ առաջարկել է բաց ու արդար գործակցութիւն եւ իր վերին աստիճանի գգօն ու սթափ գործողութիւններով ի դերեւ է հանել նրանց այդ փորձերը: Բերենք մէկ օրինակ:

Սովետները Նժդեհի առաջարկով համաձայնեցին հակաթուրքական հողի վրայ կապ հաստատել Դաշնակցութեան հետ: Պետանվտանգութեան մարմինները ձգտում էին Վրացեանին յլելի Նժդեհի նամակն այնպէս ձեւակերպել, որ դրանով հնարաւորութիւն ստանային «իրենց մարդկանց խցկել Դաշնակցութեան

²⁵ Սոյն նամակը առաջին անգամ տպագրել է Ս. Վարդանեանը «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթում, ապա՝ «Երկիր» օրաթերթում, Երեւան, 1992 թ., 31-ը գեկտեմբերին

²⁶ «Նախիջեւան», 2001 թ., թիւ 20, էջ 5.

²⁷ Յովսէփեան Վ., նշ. աշխ., էջ 56.

շարքերը»: Բայց նժդեհը, որպէսզի ի դերեւ հանի իր միջոցով Դաշնակցութիւնը քայլայելու սովետների նպատակը, Պետանվը-տանգութեան պատասխանատուների հետ բանակցութիւններում պահանջում էր.

ա. Վրացեանին որեւէ հակաղաշնակցական առաջարկ չանել:

բ. Վրացեանի հանրաւորութիւնները չօգտագործել որպէս շանթարգել այն մարդկանց դէմ, որոնք այս կամ այն դրօշի կամ կարգախօսի տակ ձգտում են վնաս հասցնել Հայաստանին:

գ. Լրտեսական կարգի որեւէ ակնարկ չանել նրան:

դ. Վրացեանին հայրենասիրական գործունչութեան առաջարկ անել քաղաքական վստահութեան հրմքի վրայ:

ե. Վրացեանից չպահանջել, որպէսզի իրեն ուղղուած մեր նամակը դառնայ այս կամ այն ընկերոջ սեփականութիւնը (յետագյում Դաշնակցութեան կամ դաշնակցական գործիչների դէմ օդտագործելու համար -Ռ. Ն.):

զ. Վրացեանից պատասխան բերել այն մասին, թէ ստացե՞լ է արդեօք նամակը եւ ինչ պահանջներ է նա դնում²⁸:

Այսքանով չբաւարարուելով, նժդեհը Հայաստանի Պետանկանդութեան նախարարին գրած իր 1952 թ. գեկտեմբերի 25-ի՝ բազմից յիշատակուած գործիւնում ուղղակի յորդորում է Վրացեանին հասցէագրուած իր ու Դէվէճեանի նամակը Վրացեանին յանձնի հենց Դէվէճեանը՝ Վրացեանի մտերիմ ու վստահելի անձը, որպէսզի «նրան վստահութիւն ներշնչի այն բանում, որ ոչ անձամբ Վրացեանին, ոչ ել նրա կուսակցութեանը սադրանքի վտանգ չի սպառնում»²⁹:

Սակայն նամակը Մոռկուային ցանկալի բովանդակութեամբ շարադրուած չլինելու պատճառով, այն հասցէատիրոջը չի ուղարկուել:

1953 թ. ամռանը Վլադիմիրի բանտ տեղափոխելուց առաջ, Հայաստանի Խորհրդային Հանրապետութեան Պետական անվտանգութեան նախարար, «զօրավար Կորիմազեանի ուղեկցութեամբ դարեգին նժդեհին ինքնաշարժ մը տարած էին ցոյց տալու

²⁸ ՅՈՎՍԵՓԵՍ. Վ., հ. աշխ., էջ 37.

²⁹ Նոյն տեղը, էջ 43.

Երեւանը, կատարուած շինութիւնները, զանազան տեսարժան վայրեր, մինչեւ էջմիածին»³⁰:

Այդ պատուախն մասնակցած Կոստանդին Աբովիանը վըկայում է, որ մեքենայում ոչ թէ Կորխմագեանն է եղել, այլ իրենց բաժնի պետի պաշտօնակատար Վարդան Մեքումովը:

Վերջինս նոյնպէս պնդում է, որ ուղեւորութիւնը գլխաւորել է ինքը՝ Կորխմագեանի կարգադրութեամբ³¹:

Վլադիմիրի բանտ տեղափոխելուց յետոյ, ուր Նժդեհը դարձեալ բաւական ժամանակ Յովհ. Տէլլէճեանի հետ նոյն իցում է եղել, վերջինս ըրջանառութեան մէջ է դրել այն տեղեկութիւնը, թէ իբր Գ. Նժդեհին որոշ ժամանակ պահել են նաև Թայշէտ քաղաքի բանտում: «...1955 թ. օգոստոսի 5-ին, երբ ընդհանուր ներումի հետեւանելով, իբրեւ պուլղարահպատակ ազատուած ըլլալով Բուլղարիա պիտի ուղարկուեի, ազատուած բանտարկեալներու առաքման կայանին մէջ հանդիպեցայ ծագումով իրեայ ֆրանսացի երիտասարդի մը՝ Վէնքիմիլիա անունով, որ նախապէս Վլադիմիրի բանտին մէջ ինձ եւ Նժդեհին սենեակակից եղած էր: Ան մօտեցաւ ինձ եւ յայտնեց թէ ընկերս կը գտնուի Միջին Ասիոյ Թայշէտ քաղաքը, ուր վերջերս բանտարկուած էր նաեւ ինք: Հարց տուի, թէ արդեօք Գարեգինը բանտի մէջ կը գտնուի³², թէ³³ կ'ապրի իբրեւ ախորական:»

Գարեգինը կը գտնուի կէս հիւանդանոց, կէս ծերանց հիմնարկութեան մը մէջ, եղաւ պատախնանը: Վէնքիմիլիայի հետ այս հանդիպումն ու խօակցութիւնը տեղի ունեցաւ 1955 թ. սեպտեմբերին: Քանի մը ամիս յետոյ, երբ Պուլղարիա ու- բարկուեցայ, ինն տեսնուեցայ Նժդեհի մտերիմ մեր կարգ մը դարձեանձագայութեան հետ, որոնք ինձ յայտնեցին թէ Գարեգինի ընկերներուն հետ, որոնք ինձ յայտնեցին թէ Գարեգինի ընտանիք (կինը, զաւակը, զռքանչը), որ ախորուած էին Պուլղարիայուն: Փակի մը ամիս յետոյ, երբ Պուլղարիա ու- գրուած է Միջին Ասիոյ Թայշէտ քաղաքին... 1954 թ. հոկտեմ- բրերի սկիզբը Նժդեհի բաժնուելով իմ սենեակէս, պէտք է ենի- րերի սկիզբը Նժդեհի բաժնուելով իմ սենեակէս, պէտք է ենի-

³⁰ ԱՐՄԵՆ ՍԵՒԱՆ, էջ 116; նաեւ՝ Գ. Նժդեհի՝ 1954 թ. յունիսի 4-ի նամակը էղբօրը՝ Լեւոնին ու եղեօր կին Փառանձեմին, «Նախիջեւան», 2001 թ., թիւ 20, էջ 13-14, կ. Արովեանի յուշերը. «Նախիջեւան», 2001 թ., թիւ 20, էջ 7,

³¹ Տե՛ս «Նախիջեւան», 2001, թիւ 20, էջ 5-7.

Վենքիմիլիայի հետ ու նաեւ նամակ գրած՝ Պուլկարիա իր ընտանիքին։ Յետոյ... կրկին տարուած է Վլատիմիրի բանտը, 1955 թ., ուր հոկտեմբերին տեսնուած է իր հարազատներուն հետ (քրոջ եւ եղբօր որդի Հրանտի հետ Ռ. Հ.), եւ ֆիչ մը վերջ, ալ վախճանուած... իր հարազատներուն տպաւորութիւնը եղած էր ան՝ որ Գարեգին ազատուելու յոյս չուներ եւ համակերպած էր բանտարկեալի իր վիճակին»³².

Տայշէտ քաղաքը գտնուում է ոչ թէ Միջին Ասիայում, այլ Բայկալ-Ամուռ երկաթուղու առաջին կէտն է (իրկուտսկի մարզ): Դէմք ճեանը նշում է, որ Նժդեհը Տայշէտից Բուլղարիա, իր կողունամակ է ուղարկել։ Դրանք մեր ձեռքի տակ եղած Նժդեհ՝ 1955 թ. նոյեմբերի 1-ի եւ դեկտեմբերի 1-ի նամակներն են եղբօր աղջկան, որոնցից առաջինում նշում է, թէ Տաշքենդից իր ընտանիքին նամակ է գրել բայց երեւի չեն ստացել, իսկ երկրորդ նամակում գրում է, որ արդէն կնոջից նամակ է ստացել³³:

Սա նշանակում է, որ Նժդեհը կնոջը նամակ է գրել ոչ թէ Տայշէտից, այլ՝ Տաշքենդից:

Պահպանուել են հարազատներին Տաշքենդից գրած եւս մօտքսան նամակներ, որոնք թարգմանաբար տպագրուած են սոյն ժողովածոյում։

Դրանցից մէկում Նժդեհը գրում է. «Օրերս պատասխանեցի Հրանտի՝ (Լեւոն եղբօր տղան) 1955 թ. յունուարի 7-ի նամակին։ Ինձ թում է թէ մոռացութեան պատճառով իմ նախորդ նամակում չեմ պատասխանել Հրանտի այն հարցին, թէ ստացել եմ իր նամակը եւ հեռագրով փոխանցած 300 ռուբլին, որ նա դրկել էր Տաշքենդ 1955 թ. յունուարի 16-ին։ Ես Տաշքենդից ձեզ գրել եմ չորս անգամ, բայց պատասխան չեմ ստացել։ 19 փետրուարի 1955 թ.»։

Միւս նամակը մեզ է հասել նրա Լեւոն եղբօր որդի Հրանտի ձեռագրով։ նա հօրեղբօր նամակը արտագրել եւ 1955 թ. մարտի 30-ին ուղարկել է հօրը։ Ահա այդ նամակից մեզ հետաքրքրող հատուածը. «Թանկագիններս, շտապում եմ ձեզ ուրախացնել, որ տեսակցութիւնը քոյլատրել են։ Եղբայրս կը գայ Տաշքենդ, կը գնայ Ուզբեկական Խորհրդ։ Սոց. Հանրապետութեան

³² ԱՐՄԵՆ ՍԵՒԱՆ, էջ 131-132։

³³ Տե՛ս «Նախիջեւան», 2001, թիւ 20, էջ 13-14։

պետական անվտանգութեան կոմիտէ եւ այնտեղ նրան կը տան թոյլտուութիւնը»:

Վերջապէս մեր ձեռքի տակ է Վլադիմիրի մարզի ներքին գործերի վարչութեան պետի տեղակալ, փոխգնդապետ Ռւլեանովի՝ Հեւոն Տէր-Յարութիւնեանի դիմումին յղած 1955 թ. յունուարի 21-ի պաշտօնական գրութիւնը, ուր ի պատահան Հեւոն Տէր-Յարութիւնեանի հարցում է, որ Նժդեհին Վլադիմիրից տեղափոխել են Տաշքենդ: Հարազատներին ուղղած մէջ այլ նամակում (1954 թ. սեպտեմբերի 11) Նժդեհը գրում է, որ ինքը ժամանակաւորապէս Տաշքենդում է եւ ինդրում է իրեն նամակ գրել Հետեւեալ հասցէով՝ Տաշքենդ, Ախունբաբակւի փ. թիւ 20: Իսկ 1955 թ. յունուարի 27-ի նամակում նշում է, որ պառկած է Ռւզբեկական ԽՍՀ նԳ նախարարութեան միջմարզային հիւանդանոցում, որի հասցէն է՝ Տաշքենդի մարզ, Կարասուլի շրջան, Կուլյուկու աւան:

Այս բոլոր փաստաթղթերը անժիտելիօրէն ապացուցում են, որ Տաշքենդը թիւրիմացաբար է ձեւափոխուել Տայշէտի եւ գրականութեան մէջ շրջանառուել այդ քաղաքում Նժդեհի գտնուելու մասին տեղեկութիւնը:

Գ. Նժդեհի մէկ այլ նամակից (1955 մարտի 3) տեղեկանում ենք. «Ես հիւանդանոցում եմ, բայց մինչեւ հիմա ներկայացուած չեմ թշկական յանձնաժողովին՝ վաղաժամ ազատուելու համար: Մէկուկես ամսից ինձ կարող են դուրս գրել, այդ ժամանակ ինձ հարկ կը լինի գտնուել Վլադիմիրում, որը հաւասարագոր է մահուան, որովհետեւ ինձ՝ հիպերտոնիկիս, անհնարին է [իմանալ] էտապաւորմանը» (քեւնասուար վագոնները լցրած բանտարկեալներին հսկայական տարածութիւններ տեղից տեղ փոխադրելը - Ռ. Հ.): 1955 թ. մարտի 11-ին եղբօրը յղած նամակում Նժդեհը գրում է. «Այսօր ինձ ասացին, որ շուտով ինձ դուրս են գրելու հիւանդանոցից: Ուր կ'ուղարկեն՝ չփուեմ: Եթէ ուղարկեն Վլադիմիր, նշանակում է ես կը մնամ նամիփին. Այլեւս ծանրոցներ եւ փող մի ուղարկե՛ Տաշքենդ: Եթէ ողջ մնամ, կը գրեմ:

Համբուրում եմ բոլորին: Գարեգին»³⁴:

Այս նամակը ստանալուց յետոյ եղբայր Լեւոնը, եղբօր որդի Հրանտը եւ քրոջ ամուսին Գուրգէն Մարտիրոսեանը 1955 թ.

³⁴ 1955 թ. մարտի 3:

մայիսի 18-ին Թիֆլիսից օդանաւով մեկնել են Տաշքենդ, տեսակցիների հետ, վերադարձել են մայիսի 24-ին³⁵:

Նժդեհի նամակներից պարզուում է, որ նրան Տաշքենդ են տեղափոխել քանի որ տառապում էր նաեւ սուր տուբերկուլիոզով, ուստի Վլադիմիրի ցրուաշունչ կլիմայի պայմաններում հնարաւոր չէր կանխել հիւանդութեան մահացու բարդացումը:

Հարազատներին գրած 1955 թ. սեպտեմբերի 12-ի նամակից պարզուում է, որ նրան նոյն օրը բերել են Վլադիմիր:

Հարազատները մահուանից առաջ նրան տեսակցել են նաեւ Վլադիմիրի բանտում: Մեր ձեռքի տակ եղած նամակներից ու վկայութիւններից կարող ենք հետեւցնել, որ Նժդեհը Տաշքենդում մնացել է 1954 թ. սեպտեմբերից մինչեւ 1955 թ. սեպտեմբերի սկիզբը:

Այստեղ ամհրաժեշտ ենք համարում մէջքերել Երեւանի բանտում Գարեգին Նժդեհին տեսած, նրա հետ առնչուած պետականվանդութեան ընդամենը երեք աշխատակիցների վկայութիւնները նրա բնաւորութեան գծերի, պահուածքի, սովորութիւնների մասին, որոնք աղբիւրագիտական նշանակութիւն ունեն:

Երեքն էլ միաբերան հաստատում էին, որ Գարեգին Նժդեհի բերանից հայհոյանք լած չկան թէեւ բազմից ականատես են, եղել կամ գաղանի ունկնդրել են քննչական մարմինների եւ Պետականվանդութեան տարբեր տրամաչափի ղեկավարների պատճառած նրա վրդովմունքներին: Կոստանդին Աբովեանը (ծն. 1924 թ.) պատմում է. «Նա չծխող էր, կոպիտ խօսքեր չէր գործածում, շատ սակաւապէտ, հաւասարակշոռուած եւ հզօր կամքի տէր մարդ էր: Մենք մի օր Գարեգին Նժդեհին Պետանիտանգութեան ծառայողական մարդատար մեենայով տարանք Երեւանը ցոյց տալու: Դա օրը ցերեկով էր... Մենք Նժդեհին տարանք այնաեղ, որտեղ հիմա կանգնած է Խորհրդային Հայաստանի 50 ամեակին նուիրուած յուշակորողը: Երեւանն ու Արարատը ամէնից լաւ երեւում էին այդ բարձութից: Ահա այստեղ նա խնդրեց, որ բոյլ տանք հող վերցնի: Նա այդ հողը պահում էր խցում, բայց Վլադիմիրում ճեռքից առել էին: Գնրգաղտնի նիւթեր պարունակող մի գործ կար, որն առանձ-

³⁵ Տե՛ս օդանաւերի տոմսերի կտրօնները և հիւանոցում բնակուելու վարձի անդորրագիրը, որոնք պահպանուում են Զաքարեանների ընտանեկան գիւղանում:

նացուած էր Նժդեհի հետաննութեան չորս հատորանոց գործից: Այդ վեց հատորը պարունակում էր աւելի քան 1500 էջ նիւթ: Ինչու կազմել եմ այդ հատորներից մեկի մի մասը, որը Նժդեհի լուսանկարների բնօրինակներն են, որ առգրաւել էին նրա տունը խուզարկելիս: Ցիշում եմ դրանց մեջ էին իր որդի Վրեժի փոքր ժամանակուայ լուսանկարը, Սոֆիայում իր տան լուսանկարը, իր՝ տարբեր դիրքերից ու մարդկանց հետ լուսանկարները»:

Հաչէ Յովսէփեանը (ծն. 1919-2003 թթ.) պատմում է. «Ոչ մի-այն հայիոյանեմ, այլ որեւէ կոպիտ արտայատութիւն չեմ լսել իրենից: Նա ընդհանրապէս շատ վսեմ խօսի ունէր: Թէեւ տա-ռապում էր տասից աւելի հիւանդութիւններով եւ շատ հիւ-ծուած էր, բայց յուսահատութիւն եւ յոգնածութիւն չեր երե-ւում նրա աչքերում»:

1947 թ. նրան Հարցաքննած, ՀՀ Պետանվտանդութեան երկ-րորդ (Հակաճետախուզական) բաժնի պետի տեղակալ, լսկ 1952-53 թթ. արտաքին հետախուզութեան պետի պաշտօնակատար, փոխ-դնդապէտ Մելքոնովը (1912-2003 թթ.) վկայում է. «Մենք նրժ-դեհին եւ Դէվէնեանին միեւնոյն բանտախցում (թիւ 30) էինք պահում եւ նրանց հետ առանձին զրոյցներից յետոյ լսող սար-քերով գաղտնալսում էինք նրանց խօսակցութիւնները, որոնք աշխատակիցներս յետոյ մեքենագրած տրամադրում էին ինձ...»

Նժդեհն ինչն էր Մոսկուային առաջարկներ անում, եւ մենք իր հետ աշխատում էինք ոչ թէ մեր առաջարկներն իր հետ համաձայնեցնելու, այլ ի'ր առաջարկութիւններն ու ծրա-գրերը Մոսկուայի հետ համաձայնեցնելու վրայ: Նրա հետ մեր համագործակցութիւնը բացառիկ էր նաև մեզ համար: Ամէն ինչ չափից աւելի հասկանալի, բաց ու յատակ էր: Զգիտեմ նման դէպք երբեւէ եղե՞լ է խորհրդային Պետանվտանդութեան մարմինների պատմութեան մեջ... Դրա համար էլ ես այն կար-ծիքին եմ, որ Նժդեհի հետ ԽՍՀՄ Պետանվտանդութեան մար-մինների յարաբերութիւնն աննախադէպ էր... Կենտրոնը հաւա-նութիւն էր տուել Թուրքիայում գործողութիւններ ծաւալելու Նժդեհի ծրագրին, որ լրամշակել էինք իր հետ, եւ որը հե-տախուզական լեզուով կոչում էր լեզենդա: Գործողութիւնը կոչուում էր «Զուրբ»... այդ գործողութեանը, ինչպէս նաև նրժ-դեհին վերաբերող ուրիշ նիւթեր դատավճարեան նիւթերից առանձնացուած պահում էին յատուկ գործի մեջ, որպէս գեր-

գաղտնի նիւթեր: Միայն «Զուբրը» կազմում էր վեց հատոր: Յաւօֆ, 1990թ. ամբողջ Խորհրդային Միութիւնով մէկ Պետանիտանկութեան եւ երկրի ղեկավարութեան գաղտնի ցուցումով բոլոր այդ կարգի նիւթերը ոչնչացուել են, աւելի յստակ՝ այրուել³⁶:

Գարեգին Նժդեհին Երեւանը օրը ցերեկով ցոյց տուողներից մէկը ինքս եւ եղել... Այդ պողպատեայ մարդը, որի համբերութիւնն ու զապուածութիւնը, իրեն տիրապետելու մեծ կարողութիւնը զարմացնում ու յարգանք էր ներշնչում բոլորին, այդ պողպատեայ կամք ունեցող մարդը, երբ մոնումենտի բարձունքից նայում էր Երեւանին ու Արարատին, յուզուեց ու ինձ բուաց թէ աչքերը խոնաւացան³⁷:

³⁶ Այդ փաստը մեզ հետ վարած զրոյցներում հաստատել են Պետանկութեան մարմինների մի քանի նախկին աշխատակիցներ, որոնց թւում նաեւ 1991 թ. վերջերից 1993 թ. սկիզբը ՀՀ Պետանկութեան նախարարի պաշտօնը զբաղեցրած վայերի Պօղոսեանը Քանի որ մի քանի ուստումնասիրողներ «Զուբր»ից օգոստել են մինչև 1991 թ. վերջը, ապա եթէ գրանք այսուել են, ապա այսուել են 1992 թ.-ից յետոյ:

³⁷ Նժդեհը Արարատ լեռը չէր տեսել 1919 թուականից ի վեր, ամբողջ 35 տարի, եւ հնարաւոր է որ յուզուէր Սական Մելքոնովի հարցազրոյցներից մէկում, նաեւ 1946 թ. ծնուած Պետանկութեան նախկին մէկ այլ աշխատակցի մի գրական երկում նշւում է, թէ իբր Նժդեհ այդտեղ լացել է: Դա ճշտելու համար մի քանի անգամ Մելքոնովին հարցուեցի: «Դուք ասում եք, որ նա ինքնասիրապետման մեծ կարողութիւններ ուներ, երկարեայ կամք եւ այլն, բայց ո՞նց կարող էր նա իրեն բանարկողների ներկայութեամբ, որոնք ձեր իսկ պնդմամբ նրան համարում էին թշնամի, արտասուլք»: Մելքոնովը պատասխանեց: «Ինձ բուաց թէ նրա աչքերը խոնաւացան, Քանի որ լրագրողները սիրում են յուզիչ բաներ լսել եւ իրենին ել սովորութիւն ունեն ամէն ինչ ծաղկեցնել-չափազանցեցնել, մըտածեցի ասած աւելի ազդեցիկ դարձնելու համար ասեմ՝ լուր արտասուում եր, Նրանք ել դարձրին՝ լացում եր: Ըստ եւրեան դրամին նոյն բանն են», «Բայց Դուք չափազանցրել-ասել եք՝ լուր արտասուեց, նրանք ծաղկեցրել-դարձրել են լացեց, վաղը մէկ ուրիշն ել կը գրի՝ հեկեկաց: Հիմա Դուք ինձ կարո՞ղ եք ասել իրականում ինչպէ՞ս է եղել: Դուք վստա՞հ եք որ նրա աչքերը բացացան»: «Վստահ չեմ կարող ասել-պատասխանեց սովորական հին հետախոյըը, բայց որ զգացի յուզուեց, դա հաստատ է»: Նոյն հարցը 2004 թ. օգոստոսի 20-ին տուեցի նաեւ Կ. Աբովյանին, որը նոյնպէս ներկայ է եղել այդ մշակայութեանը նա իմ ինդիւնում ինչպէ՞ս ի եղել:

Նա մեզ խնդրեց թոյլ տալ, որպէսզի մի քիչ հող վերցնի հետը: Այդ հողը նա թաշկինակի մէջ պահում էր ծոցում, բայց Վաղիմիրում ճեռքից խլել էին...

Խիստ սակաւապէտ էր, քչակեր, ծխող չէր, խնդրել չէր սիրում, խօսելուց առաջ միշտ մտածում էր, խօսում էր շատ տրամաբանուած, համոզիչ, փաստերով յագեցած ու առարկութեան որեւէ սողանցք չէր թողնում: Շատ հաւասարակշռուած, խոհուն, հանդարտ բնաւորութիւն ուներ, խիստ զուսպ էր, չէր բռնկւում, չափից աւելի համբերատար էր լսելու մէջ եւ վընական ու իմպերատիւ՝ իր սկզբունքներն ու կարծիքները դիմացինին ներկայացնելիս կամ դրանք պաշտպանելիս... Ո՛չ ես, ո՛չ նրա հետ շփուռդ իմ աշխատակիցները նրա բերանից հայ-հոյանք չենք լսել... Զայնը առինքնող, համոզիչ էր, նման էր դերասանի ձայնի, մինորային բարիտոն ուներ, ձայնի ինտոնացիան յիշեցնում էր Վահրամ Փափազեանի ձայնը: Նժդեհի գերագոյն նպատակն էր, որպէսզի Հայաստանը լինի ինքնուրոյն,

առաջին կէսին, ժաման մօտաւորապէս 14-ին ցոյց են տուել Երեւանու Դավաղթանակի այգու հարեւանուութեամբ Խորհրդապին Հայաստանի 50-ամեակի առթիւ կանգնեցուած յուշակոթողի ուղիղ դիմացն է, որտեղ այժմ մի քանի բարդիներ կան «Նժդեհին հենց այդ բարդիների տեղից ցոյց տուեցինք Երեւանը» պատում է Կ. Աբովեանը: Այդ ժամանակ, 1952 թ., ի հարկէ, այս բարդիները չկային ոչ էլ որեւէ շխնուրիւն կամ աւտոնմանապարհ կար: Մ-1 մակնիշի մեքենան վարորդի հետ միասին կանգնեցրեցինք Յաղթանակի այգու մօտերքը եւ Նժդեհին երեւ հոգով (մեր բաժնի պետի պաշտօնակատար, ծնունդով արցախից, այժմ հանգուցեալ Վարդան Մելքոնովը, 1920-23 թր. Գանձակի կողմերում ծնուած Վարդգէս Մելիքեան եւ ես) բերեցինք այստեղ (այն ժամանակ Արարատը եւ Երեւանը ամենալաւը այստեղից էր Երեւում), այստեղ մնացինք մօտ 30 բոլէ Նժդեհին թոյլ տուեցինք մի բուռ հող վերցրեց, փարաքեց թաշկինակի մէջ, դրեց գրպանը: Ահա Այստեղից, երբ նայում էր Արարատին, յուզուեց, աչքերը խոնաւացան: «Դուք վստա՞՞ի եք որ յուզուեց եւ աչքերը զուեց, աչքերը խոնաւացան»: «Դուք վստա՞՞ի որ իրեն այցուէս է թուալուեցին» հարցիս Կ. Աբովեանը պատասխանեց, որ իրեն այցուէս է թուալուեցին յետոյ Մելքոնովին հարցրել է, վերջինս նոյնպէս ասել է, որ Նժդեհը յուզուեց եւ կարծես թէ աչքերը խոնաւացան Դրանից յետոյ նոյն մարդիկ Նժդեհին մեքենայով ցոյց են տալիս քաղաքի կենտրոնական փողոցները, Նժդեհին մեքենայով ցոյց են տալիս քաղաքի կենտրոնական փողոցները, Ղանթարի շուկան, ՀՀ խորհրդարանի շնչքը, Դաշնակցութեան տունը, Օսկերական շնչքը, Արամի, Աբովեան ու այլ փողոցներ Նժդեհը գոհունակութիւն բայի շնչքը, Արամի, Աբովեան ու այլ փողոցներ Նժդեհը գոհունակութիւն է յայտնում, որ բաւական շնչքեր են կառուցուել, Երեւանը գեղեցկացել է:

ազատ ու անկախ: Այս խօսքերը նա մեր գրոյցներում բազմից լըս կրկնել է»³⁸:

Իսկ աւելի ուշ, ինձ հետ իր գրոյցներից մէկում *Մէլքումովին* ասաց, որ Նժդէհը հարցաքննութիւնների ժամանակ սովորութիւն ունէր դէմքի մկանները կծկել, որով նա «լիցքափում էր ներքին լարռումք»:

Սլիմէնի (*Բուլղարիա*) ցեղակրօն ուխտերի անդամ, այժմ *Վիեննա* բնակուող կարպիս Փափազեանի (ծն. 1919թ.) վկայութեամբ Նժդէհը միշտ հաւասարակըուուած էր, լուրջ, բայց ոչ՝ մըուայլ, խօսում էր հանդարտ, չէր զայրանում, ինքնատիրապետման շատ մեծ ունակութիւն ունէր, ուստի զուսպ էր թէ՛ ուրախութեան եւ թէ՛ տխուր կամ զայրացած պահերին, իրոխտ քաշ-լուածք ունէր, երբեք չէր հայՀոյում, նրա սովորական, կենցաղային խօսքը եւս շատ համոզիչ էր, առինքնող, խօսակցի համակրանքը շահող ազդեցութիւն ունէր:

Իր բնաւորութեան գծերի մասին ուղղակի վկայութիւն ունի նաեւ Նժդէհը: 1954 թ. սեպտեմբերի 1-ի նամակում գրում է. «Ես չէի կարծում, որ դուք իմ նամակեների բովանդակութիւնից կարող եք եզրակացնել իմ զղային (ներվային) լարուածութեան մասին: Սիստում եք, սիրելիներս, իմ աշխարհընկալման մարդը չի զղայնանում: Ես ապրում եմ իհն յեղափոխականի ու հայրենասէրի ողբերգութիւնը, որը խարուել է իր ակնկալիքներում: Ահա ամբողջ նշմարտութիւնը»:

Մէկ այլ նամակում (24 օգոստոսի 1955 թ.) աւելի յստակ է ներկայացնում իր բնաւորութեան գծերը, խառնուածքն ու հոգեկան դրութիւնը. «Դուք ինձ խորհուրդ եք տալիս. «Հիպերտոնիկներին զղայնանալ (*Բնագրում՝ ներվայնանալ Ռ. Հ.*) չի կարելի» եւ այլն: Սիրելիներս, նիշտ կը լիներ, եթէ դուք ինձ խորելի» եւ այլն: Սիրելիներս, նիշտ կը լիներ, եթէ դուք ինձ խորելի» եւ այլն: Սա աշխատանք է իմ տածել չեմ կարող: Զե՞՞ որ մտածմունքն է մարդկային ողբերգութեան աղքիւրը: Ես զղային (ներվային - Ռ. Հ.) չեմ, ոչ ել բռնկուող: Ես երիկապէս ծայրայեղ զգացական եմ. այն ամէնը, կեանեում թէ փիլիսոփայութեան մէջ, ինչ որ տրամարանութեանը դէմ է, իմ մէջ վիրատուրում է նշմարտութիւնը եւ առաջացնում է հոգեկան ցաւ: Ահա թէ որտեղից են իմ հիւանդութիւններից երկուսը՝ հիպերտոնիան եւ սրտի արատը: Տառապում եմ, որովհետեւ չեմ կարողանում աշխատել ծեռագրերիս վրայ: Ստեղծագործել նշանակում է շարունակել իրականութիւնը: Ես այժմ չեմ ստեղ-

³⁸ «Նախիջևան», 2001, թիւ 20, էջ 5-6.

ծագործում, քանի որ հիւանդութիւններս ինձ գրկում են այդ հնարաւորութիւնից»³⁹:

Նժռեհի աշխատութիւններից ու նամակներից, նաեւ յուշագիրների վկայութիւններից պարզում է, որ նրա սիրելի հերոսներն էին՝ հներից Վահագն Վիշապաքաղը, Մամիկոնեաններն ու Դաւիթ Բէկը⁴⁰:

Իր ժամանակակիցներից առանձնացնում էր Քեռուն, Մեռաստացի Մուրատին, Անդրանիկին, Խաժակին, Խչչօյին, օտարներից՝ Կեմանսոնին, Դանտոնին:

Սիրելի երաժշտագիրները՝ Բեթհովեն, Վագներ:

Կաթողիկոսները՝ սբ. Ներսէս Մեծ, սբ. Սահակ, Խրիմեան Հայոցի:

Փիլիսոփաները՝ Սոկրատ, Պլատոն, Կանտ:

Գրողները՝ Աբովեան, Ալիշան, Բաֆեի, Աւ. Ահարոնեան:

Բանաստեղծները՝ սբ. Գրիգոր Նարեկացի, սբ. Ներսէս Շնորհալի, Դանիէլ Վարուժան:

Պատմագիրները՝ Խորենացի, Եղիշէ, Զերեղոսա, Ժիւլ Միւէ:

Կայսրը՝ Մարկոս Աւրելիոս:

Զօրավարները՝ Հաննիբալ, Ալեքսանդր, Յուլիոս Կեսար, Նապոլէոն:

Օրէնսդիրը՝ Լիկուրդոս:

Ժողովուրդը՝ ճապոնացի, բուլղարացի:

Իրեն սրտամօտ ազգային ու պետական գործիչներից էին չեխ փիլիսոփայ, 1918-1935 թթ. Զեխուուրվակիայի նախագահ Տոմաշ Մասարիկը (1850-1937), Փիխն ազգային գործիչ իոհան Վիլհելմ Անելմանը (1806-1881), Մահաթմա Գանդին⁴¹, նաեւ լեհ պետական գործիչ Եուզէֆ Պիլսուցկին, ծովակալ Հորժին:

³⁹ Նոյն տեղում:

⁴⁰ Կարոյ Մեհեան-Ղազարոսեանը իր յուշերում (*Աքատրականի մը յուշերը, գրեց Սօսնաց տղան, Պէյրութ, 1969 թ., էջ 91-92*) գրում է, որ Նժռեհի Սոփիայի տանը՝ նրա առանձնասենակի պատին, կախուած էր Դաւիթ Բէկի նկարը:

⁴¹ Գանդիին Նժռեհը ամենայն հաւանականութեամբ տեսել է, երբ վերջինս տանիքի 17-ին մի քանի օրով ժամանել էր Սովիա, դասախոսութիւններ կարգացել, հարցազրոյցներ տուել տեղական թերթերին, որոնց թը թիւններ կարգացել, հարցազրոյցներ տուել տեղական թերթերին, որոնց թը տում նաեւ Սովիայում լրաց տեսնող *Ալբագա* դաշնակցական օրաթերթին «Արախ» օրաթերթ, 1926 թ. նոյեմբերի 18, էջ 2. նոյեմբերի 19, էջ 1-2.

Իր սիրելի երգերից էին՝ «Մայր Արաքսի ավերով», «Օտար ամայի ճամփեթի վրայ», «Հայաստան, երկիր դրախտավայր»։

Նրա պաշտամունքը Մասիսը, Հայկ Նահապետը, սբ. Մեսրոպը, սբ. Վարդանն ու Մամիկոնեաններն էին։

Տէվէճեանը նշում է. «Երբ Խորհրդային Միութեան հազարաւոր գիւղերն ու քաղաքները քարուքանդ ընող, միլիոնաւոր մարդոց մահուան պատճառ եղող գերման զօրավարներն ու մարածախտները ներման կ'արժանանային, նժդեհը իր ո՞ր անքանելի մեղքին համար բացառութիւն պիտի նկատուեր ու զրկուեր ներումէն...»⁴²։

Գաղտնիք չկայ: Բազում ու բազմապիսի խոշտանգումներից յետոյ «Ներման արժանացնում», բանտից ազատում էին նրանց, ովքեր ներման դիմում էին գրում: Տասնմէկ տարուայ ընթացքում Գարեգին Նժդեհից անընդհատ գա են պահանջել: Խսկ նա միշտ պաշտպանել է իր սկզբունքները, ապացուցել, որ ինքը ներման կարիք չունի. «Իմ սկզբունքներին հաւատարիմ մնալով, գրում է նա կրեմլի պետերից՝ Վորոշիլովին, ևս հետաքննութեան ընթացքում չեի պաշտպանում, քանզի իմ ամրոջ կեանելում ես ձեռք չեմ զարկել որեւէ գործի, որը բարոյական պաշտպանութեան կարիք ունենար»։

Հնդ որում բոլոր հարցաքննութիւնների ժամանակ պատասխանում է Հարցերին, իր արարքների ամբողջ պատասխանատուութիւնը վերցնում է իր վրայ Յուցմունքները տալու ընթացքում որեւէ անձիշտ բան չի ասում. առաւելագոյնը որ անում է այն է, որ քննութեանն անյայտ այն դրուադները, որոնք կարող էին օգտագործել իր դէմ, շրջանցում, դրանց մասին տեղեկութիւններ չի յայտնում։

Տասնմէկ տարի շարունակ խորհրդային տանջարաններում հոգեկան ու մարմնական անլուր կտուանքների ենթարկելուց սկզբած, զանազան անձանց գաղտնի անձնարարութեամբ նրա բանտախուցն ուղարկելով վերջացրած՝, սովորութեան ամէն զնով փորձեցին նրան համոզել իր արածների համար գոնէ ձեւականօրէն զղջալ: Նրանից չկարողացան նուազագոյն խսկ զիջում կորզել:

⁴² Ա.ԲՄԷՆ ՍԵՒԱ.Ն, էջ 134.

⁴³ Հայաստանի Պետանվտանգութեան նախարարին յղած իր 1952 թ. դեկտեմբերի 25-ի նամակում նժդեհը գրում է. «Ամբողջ չորս տարի ես հետաքննում էմ կալանաւոր համարուղ տարրեր մուք անձանց կողմից»:

«11 տարուայ իմ բանտարկութեան ամբողջ ընթացքում ես չկարողացայ հանդիպել դատախազի հետ, որպէսզի իինդ բովածում ապացուցէի, թէ ինչպէս եմ դարձել ոխմբնականութեան զնի», Միւումինը Բերիայի մերձաւոր գործակիցն էր գրում է նա իր 1955 թ. մարտի 14-ի նամակում։ Ամբողջ 11 տարի, շարունակում է եղրօրն ուղղուած 1955 թ. հոկտեմբերի 12-ի նամակում, Կրիմեան բերիականները⁴⁴ ճգում էին իրենց մութ նպատակների համար հայութեանը ներշնչել այն միտքը, որ ես կենդանի չեմ, որ սպանուած եմ։ «Այո, գրում է մէկ այլ նամակում, Աստծոյ հողմաղացները աղում են հանդարտ, բայց շատ մանր։ Հայաստանի նախկին պետանվտանգութեան նախարար Կրիմեանը գնդակահարուել է որպէս դաւանան։ Այդ գազա՞նը գերեզմանեց ինձ։ Այդ մարդու հրահանգներո՞վ նրա փոխնախարարն ու բննիչները մոգոնեցին կեղծեցին իմ «գործը»։

Նա՛ ստեղծեց Խոնունցին Ռիւմինչչինայի հրետանուն՝⁴⁵ Նրա՛ նախարարութեան ժամանակ [Երեւանի բանտից] անհետացան իմ եօթ տետրերը, որոնցում ես դիմակագերծել էի նրա դրածոներին։

Նա՛ բանտային բժշկին թոյլ չէր տալիս հոսպիտալացնել թռախտաւորիս։ Այդ նա՛ ինձ տուեց «Երեք օր՝ մտածելու համար»։ Նա՛ հրահանգեց, որպէսզի ես այլեւ Նժդեհ չստորագրեմ։

Այդ նա՛, իր տեղակալը եւ դրածոները լուրեր տարածեցին, թէ ինձ սպանել են Բուլղարիայում, ուրիշ տարբերակով՝ Խորհրդային Միութիւնում»⁴⁶։

Ծանօթանալով նրա խոշտանգումներին վերաբերող վատերագրերին, հիացմունքով ու զարմանքով համոզւում ես, որ միւմիայն հոգեկան ուժերի ահռելի ու անսովոր կուտակումների տէր անզուգաղիր գերմարդը կարող էր գիմանալ ու դիմակայել այդպիսի մարտիրոսութեան եւ բանտում հրաշքով ողջ մնալ ամբողջ լլ տարի...»

Տրամաբանութեան բոլոր կանոններով Նժդեհը պէտք է բանտում մահանար կամ կաթուածահար լինէր բանտարկութեան

⁴⁴ Նիկիտա Արկադիի Ղրիմեան (Կրիմեան), 1946-47 թթ. Հայաստանի պետանկանութեան նախարարը, Լաւրէնտի Բերիայի դրածոն

⁴⁵ Հին բոլեւիկ Խոնունցը որպէս կեղծ վկայ ցուցմունք էր տուել թէ իբր Նըժնին գործութեամբ գնդակահարել էր բոլեւիկներին եւ այն։

⁴⁶ Նոյն տեղում։

առաջին իսկ ամիսներին, ինչին ի դէպ յամառօրէն ու նպատակասաց ձգտում էին նրան տարիներ շարունակ հոգեբանական մահապատժի ենթարկող դահիճ-քննիչները:

«Իմ բննիչն ինձ ամբողջ հինգ օր զրկել է բնից՝ քոյլ չտալով հանգստանամ գոնե ցերեկով, գրում է Նժդեհը սովորութեան պետ, զօրավար Աբակումովին ուղղած իր 1945 թ. մայիսի 24-ի դիմումի մէջ»⁴⁷:

ՀՀ Պետանկուտանգութեան նախարարին յղած 1952 թ. դեկտեմբերի 25-ի դիմումում Նժդեհը գրում է. «Երջանցելով ձեր իսկ օրենքները, ինձ արգելում է նամակագրութիւն ունենալ մտերիմներիս, նյշնիսկ հարազատ եղօրս հետ... Ձեր նախարարութեան մարմինները գգտել ու գգտում են հայութեանը ներշնչել, թէ ես ողջ չեմ: Ինչու՞ է դա արտում: Ո՞րն է նպատակը. նպատակը պարզ է. որպէսզի, եթէ երբեւ ինձ սպանեն, հայ ժողովուրին այդ սպանութիւնը ձեր մարմիններին չվերագրի... ինձ յայտարարելով սպանուած՝ ձեր մարմինները... ինձ զրկել են այն բոլոր իրաւունքներից ու հնարաւորութիւններից, առանց որոնց կալանաւորի կեանքը վերածում է երկա՛ր հոգեկարգի: Ես զրկուած եմ բուժուելու հնարաւորութիւնից: Ինձ համար չէ՝ ձեր հիւանդանոցը: Տառապելով արտրիտով, սկլերոզով ու 240 աստիճան արեան ճնշմամբ ուղեկցուող փայծաղի հիւանդութեամբ, ինձ անհրաժեշտ է դիետ սնունդ, մինչդեռ ես ակամայ օգտագործում եմ սելյուկա, այն է՝ հարկադրուած եմ գիտակցօրեն սրացնել հիւանդութիւններս, քունաւորել ինքզինքն՝ նպաստելով իմ հաշմանդամութեանը: Սա անարիւն սպանութիւն չէ: Ֆիզիկապէս ծայրայեղ խարխլուած, ուժասպատ հիւանդին զրկել հարազատ եղօրից դրամական օգնութիւն ստանալու օրինական իրաւունքից - մի՞թէ դա չի հաշմակում երան գամել տեւական հոգեկարգի - մահուան... Մարդկութեան պատմութիւնը դեռևս չի հանաչում դէպի, երբ մարդը այնպիսի պայմաններում գտնուէր, ինչպիսին ես՝ ձեր նախարարութեան կամքով»⁴⁸:

Խորհրդային Միուլթեան Գերագոյն խորհրդի նախագահ Վորոշիլովին հասցէագրուած նամակում Նժդեհը գրում է. «Ակնեցին ամենահաւոր խոշտանգումները, որ կարող է հնարել միցին ամենամասն միտքը... ամէն հինգ բոպէն մէկ լսում էր այն դաժանամոլ միտքը... իր հեղինակած սխալսչառ դրքի էջ 42-46-ում:

⁴⁷ Նոյն սեղուամ:

⁴⁸ Բնագիրը հայերէն է, որի ոռւսերէն տարբերակը հրատարակել է Վ. Ցոլ սէփեանը՝ իր հեղինակած սխալսչառ դրքի էջ 42-46-ում:

հերթապահի բղաւոցը՝ դուք բնա՞ծ էք: Ինձ ցերեկները ո՞չ պառկել էին քոյլ տալիս, ո՞չ ննչել: Այդպէս ամրող օրը ևս ստիպուած էի մահեակալին շղթայուածի նման մնալ՝ դեմքով դէպի դռան դիտանցքը: Որպէսզի ինձ զրկէին քնից, հարցա- վենութեան էին տանում գիշերները եւ դիտաւորեալ պահում մինչեւ լուսարաց: Ինձ հարցեր տալու եւ դրանց պատասխա- նը գրելու փոխարէն, նրանք արանագրութիւններ էին յօրի- նում, կարդում ինձ (ակնցոց չէին տալիս, որ ինքս կարդամ): Մայոր Պուտինցեւը ակնյայտորէն խեղաթիւրում էր փաստերը եւ իր ինքնամոգնուածքներով փոխում իմ ցուցմունքների ի- մաստը... Արանագրութիւնն ինձ ստորագրել տալուց առաջ իմ երկրորդ քննիչ մայոր Շիշկովը դիմեց խարդախութեան: Նա ինձ կարդաց մի թերթ եւ ստորագրել տուեց մէկ ուրիշը՝ կեղծուածը... Ես բարձր շերմութիւն ունեի եւ ահաւոր յօդա- ցաւեր: Բժիշկ խնդրեցի, չկանչեցին: Նեարդերի ծայրայեղ լա- րումից ուշաթափուեցի: Այդ անգամ իմ տանջանքները տեսեցին 19 ժամ...»

Մի անգամ քննիչն ասաց ինձ.

- Ես հասայ իմ ուզածին. որոշուած է կտրել ձեր լե- զուն: Ե՞րբ, դա չեմ ասի, բայց շուտով դուք կը մնամ առանց լեզուի: Եւ կը սկսեմ ողջ-ողջ քայլայուել բանտում... Ես ձեզ ազնիւ խօսի եմ տալիս, որ ձեզ կը հասցնեմ խելագարութեան, ինչից դուք այդքան վախենում էք:

... Քննիչներն իմ գործը վարում էին պարբերական խոշ- տանգումներով, ամենակոպիտ կեղծումներով... մէկ օրուայ ընթացքում ինձ այնպիսի վիճակի էին հասցնում, որ կատա- րեալ առողջութեան տէր մարդն անգամ կարող էր վերածուել կենդանի փլատակի... Աւելի վատ էր իմ հոգեկա՞ն վիճակը: Ես խելագարում էի՝ պատկերացնելով իմ միակ զաւակի դի- ակը: Զգուշանալով կիսամահից, ես ճգնում էի մահուան, բայց ինձ մերժում էին այդ «գթութեան պարգեւը»⁴⁹:

Ինչպէս ինքն է այդ նոյն դիմումի մէջ նշել, նա բանսում «ողջ-ողջ թաղուած, պատի մէջ շարուած-զնդանուած» մնաց 1944 թ. հոկտեմբերից մինչեւ 1954 թ. մայիսը, երբ Ստալինի մահից յետոյ նրան ինը տարուայ բանտարկութիւնից յետոյ առաջին

⁴⁹ ՀՀ կառավարութեանն առընթեր Ազգային անվտանգութեան ծառայութեան դիւնան, Կ.Գ.Ֆ., գործ 12997, հա. 3, էջ 108-214.

անգամ թոյլատրեցին Խորհրդային Միութիւնում բնակուող հարազատների հետ նամակագրութիւն ունենալ: Նա մինչեւ կեանքի վերջը անհամբեր սպասում էր Բուլղարիայի Պալիկէնէ քաղաք աքսորուած ընտանիքի հետ նամակագրութիւն ունենալու թոյլ-տուութեանը, որը ստացաւ մահուանից ընդամէնը 20 օր առաջ ու աւելի շատ վշտացաւ, քան ուրախացաւ դըանից՝ թէեւ իր կեանքի վերջին ամիսներին ողջ էր մնում այդ նամակը ստանալու յոյսով: Ընտանիքից նամակ ստանալուց 20 օր յետոյ Մեծ Յաւիտենականը յաւիտեանս փակեց աչքերը՝ իր ամբողջ կեանքը քաղցրութեամբ պատարագելով ժողովրդին ու հայրենիքին:

Յայտնի է, թէ խորհրդային գնդաններում ինչ լուսենէն այրեր նահատակուեցին՝ Զարենցից եւ Բակունցից սկսած՝ հազարաւոր ուրիշներով վերջացրած: Բայց Գարեգին Նժդէնը եզակի եղաւ նաեւ իր չարչարանքներում: Նրա կեանքի թէլը եթէ կտըրուէր աւելի վաղ, գուցէ թէ հոգեկան ու մարմնական տառապանքի քաշով հաւասարուէր յիշատակածս նահատակներին:

Բայց նրա մարտիրոսուութիւնը տեւեց տասնմէկ տարի, որը յիշեցնում է սբ Գրիգոր Լուսաւորիչի չարչարանքները Խոր Վիրապում... Տասնմէկ տարի զնդանուած մնալով նոր Խոր Վիրապում, նա մարմնով, բարոյապէս ու մանաւանդ հոգեպէս խոչտանգուեց՝ իր համոզմունքներից ու կատարած գործերից չհրաժարելու եւ իրեն անընդհատ հայրենասէր յայտարարելու համար, ինչպէս քրիստոնեայ սրբերն ու վկանները՝ Քրիստոսից ու քրիստոնէութիւնից չհրաժարուելու համար:

Այս դիտակէտից Գարեգին Նժդէնը իբրև կենդանի նահատակ, մարտիրոս ու վկայ, բոլշեւիկեան դիւապետութեան (իր բառն է) ամենաչարչարեալ գոհն է հայկագուններից:

Այդ մասին նա դիմէր ու գրում էր. «...Պիտի օրինել նակատագիրս, որ ինձ կանխորշուած է լինել մարտիրոս:

Որպէսզի իմ մէջ յալթահարեմ վաղաժամ մահանալու միտքը, ինձ անհրաժեշտ է հանել հոգու հանդարտ վիճակի՝ տարակսիայի⁵⁰:

Իսկ ատարակսիան ինձ տալիս է հայրենի Արարատը: Զէ՞ որ նա յաւերժ է... Նրա համար մահ չկայ... Արարատը, որի տեսիլքն ինձ չի լքում երբեք, որի վեհափառ պատկերը ներհայեցօրէն տեսնում եմ ամեն առաւօտ ու իրիկուն: Աստուած,

⁵⁰ Հոգեկան անվրդովութիւն, որը հին յունական որոշ իմաստասէրների կարծիքով (Սոկրատէս եւ ուրիշներ)՝ ձեռք է բերում իմաստունը:

Աստուած իմ, որքա՞ն կ'ուզէի հանգչել, մեռնել Հայաստա-
նում՝ նայելով Արարատին...

Սիրելի եղբայր Լեւոն,... դու մի ննշուիր ու մի թախ-
ծիր: Ինձ վիճակուած է եւ ես կը մեռնեմ իրեն նահատակ,
ինչպէս մեռնում են մահը զգեւնած մարդիկ»⁵¹:

Թէ՛ մինչեւ դատավճիռը, թէ՛ դատավճնուից յետոյ Նժդեհը կա-
րողանում է բանտից եւս ծառայել Հայաստանի ամբողջացման
դատին՝ Թուրքիա ներխուժելու անթափոյց նպաստակ ունեցող խոր-
հրդային զեկավարութեանը ներկայացնելով Արեւմտահայաստանը
Խորհրդային Հայաստանին կցելուն ուղղուած ռազմական գործո-
դութիւնների («Հայկական իսեղենտ»)⁵² մի քանի ծրագրեր:

Աննախադէպ երեւոյթ բոլեւիզմի պատմութեան մէջ, երբ
այդ բռնադիրութեան գաղափարական հակառակորդը առանց գա-
ղափարական որեւէ զիջումի, կարողանում է բանտից համագոր-
ծակցել իրեն բանտարկողների հետ: Եւ ամենազարմանալին. նա
կարողանում է ժամանակաւորն ու անցողիլը անտեսել՝ խորհր-
դային բանտի կտտանքներն ու մարդայօշ գործողութիւններն իր
կաշուի եւ հոգեբանութեան վրայ զգալով ու կրելով: Սա՛ է ան-
ըսմբռնելին ու անհաւատալին: Պատկերացրէք՝ քեզ ամիսներով
չարչարում, չեն թողնում քնես, արգելում են նամակներ յղես
հարազատներիդ ու ստանսա, խոչտանգումներով աւերում են ար-
ուղջութիւնն, քեզ դատում-մեղադրում են շինծու մեղքերի մէջ,
մի քանի ծանր հիւանդութիւններով տառապող 62 տարեկանիդ
դատապարտում են 25 տարուայ բանտարկութեան, որը հաւասա-
րազօր է մահապատժի, զրկում են քայլայուած առողջութեանդ
պատճառով քեզ օրէնքով բանտից վաղաժամկէտ ազատ արձակե-
լու իրաւունքից... եւ այսքանից յետոյ դու քո մտքերի ամբողջ
սեւեռումով փորձում ես դաշիններիդ համոզէլ, որ Թուրքիան
խորհրդային իշխանութեան թշնամին է, որ անհրաժեշտ է
ԽՍՀՄ հարաւային սահմաններն ամրացնելու համար Արեւմտա-

⁵¹ Հարազատներին գրած 1955 թ. յունիսի 16-ի, նոյեմբերի 1-ի, մարտի 11-ի
նամակներից՝ երկրորդ եւ երրորդ նամակների թարգմանութիւնը տե՛ս նա-
և «Նախիջնան», 2001 թ., թիւ 20, էջ 13-14:

⁵² Այս կազմակերպութիւնը՝ Նժդեհը ստեղծել էր 1938 թուից յետոյ եւ որոշել
1939 թ. հրաւիրել «Հայկական իսեղենտ»-ի առաջին համագումարը, սակայն
երկրորդ աշխարհամարտի բռնկումը ի չփք է գարձնում գաղափարի իրա-
ծուումը (տե՛ս նրա «Խաչիակացութիւնը Բուլղարիայում» յօդուածը, Գ.
գործումը (տե՛ս նրա «Խաչիակացութիւնը Բուլղարիայում» յօդուածը, Գ.
նժդինէլ, Երկեր, հու. 2, էջ 463, տե՛ս նաեւ՝ Գ. Նժդեհի 1946 թ. նոյեմբերի
16-ի հարցաքննութիւնը, Նժդեհի գործ, հու. 2, էջ 12, մեքենագիր էջ՝ 22).

Հայաստանը կցել խորհրդային Հայաստանին, որ ափիւռքը պէտք է միաւորուի այս գաղափարի շուրջ եւ այլն...

Հոգեկան ու մարմնական բազմապիսի չարչարանքներից ու կտտանքներից քայլայուած նրա առողջութիւնը ի վերջոյ անյուրավի վատանում է եւ, իբրև մարտիրոս ու նահատակ, 1955 թ. դեկտեմբերի 21-ին Վլադիմիրի բանտում կնքում է մահկանացուն: Անվերապահօրէն կարելի է պնդել, որ եթէ նա շատ աւելի վաղ չչմահացաւ կամ՝ առնուազն չինդանդամուեց եւ հոգեկան հաւասարակշռութիւնը չկորցրեց, ապա չնորդի իր հոգեկան վիթխարի ուժերի, որոնք նրան զօրութիւն տուեցին ապրելու աւելի շատ, քան թոյլ էր տալիս նրա ամբողջովին քայլայուած ու աւերուած առողջութիւնը: Ինչպէս ինքն է վկայում հարազատներին Տաշքենդից ուղարկուած 1955 թ. մարտի 3-ի նամակում, «Հայաստանից մի բուռ հող եմ վերցրել: Դա հայրենի հողն է՝ ինձ հետ բանում: Կ'ուզեմ, եթէ վիճակուած չէ ապրել, գոնէ մեռնել հարազատ հողի վրայ»⁵³: Ստանալով եղբօր մահուան բօթը, Լեւոն Տէր-Յարութիւնեանը, մեկնում է Վլադիմիր, վերցնում է եղբօր զգեստը: Ձեռագրերը եղբօրը չեն տալիս եւ ոչ էլ թոյլատրում են մարմինը տեղափոխել Հայաստան:

Եղբայրը ստիպուած նրա դին ամփոփում է իշխանութիւնների նախատեսած վայրում Վլադիմիրի բանտին կից քաղաքային գերեզմանատանը, կատարում է թաղումը, գերեզմանը ցանկապատել է տալիս: 1957 թ. յունիսի սկզբներին Լեւոնի որդի Հրանտ Տէր Յարութիւնեանը, իր քրոջ ամուսին կդիկ Զաքարեանի հետ դնում են Վլադիմիրը⁵⁴, հետները երեւանից տարած երկաթեայ տախտակի վրայ ոռուսերէն գրել են տալիս: «Տէր Յարեկի նութիւնեան Գարեգին Եղիշելիք (1886-1955)» Նժդեհ, N 825, տեղադրում գերեզմանին (Արմէն Սեւանի «Բանտարկեալի մը յուշերը» գրքի 134 էջում գետեղուած է Վլադիմիրում Նժդեհի գերեզմանի լուսանկարը), տեղում վարձում են մի ոռուս կնոջ, որը ստանձնում է գերեզմանը խնամելու պարտականութիւնը (նրան Երեւանից ամիսը մէկ փող էին ուղարկում):

ՌԱՖԱՅԵԼ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵՍՆ

⁵³ Տէ՛ս նրա 1955 թ. մարտի 3-ի նամակը հարազատներին, Զաքարեանների ընտանեկան դիւան:

⁵⁴ Տէ՛ս «Վլադիմիր» հիւրանոցից նրանց տրուած 1957 թ. յունիսի 17-ի անդորրագիրը, որը գտնուում է Զաքարեանների ընտանեկան դիւանում:

The Martyrology of Garegin Njdeh in soviet jails

RAPHAEL HAMBARDZOUNYAN

(summary)

After getting acquainted with Garegin Njdeh's letters sent from prison, with the statements of examinations and with other evidences that reached us, it becomes doubtless that the stated materials are not only important sources of Njdeh's biography but also of the Armenian history from 1919 to 1947, especially of the "not so well known events" of 1933 - 1953 period.

It is known that in soviet jails many brilliant Armenian personalities were persecuted. To start with Charents and Bakunts and end up with many others. But Garegin Njdeh was unique with the pains that he endured. If his life path had stopped well before, maybe his moral and physical sufferings would equate him with the above stated martyrs. But his martyrdom lasted eleven years, which reminds us of St. Gregory Enlightener's sufferings in Khor Virap. Having been in captivity in new Khor Virap for eleven years, Njdeh was physically, morally and mentally afflicted for his convictions, for not denying and not repudiating his actions, and for having always claimed his patriotism, like the Christian saints and witnesses, who didn't wish to renounce Christianity and Christ. From this point of view, Garegin Njdeh, as a living martyr, sufferer and witness of the "bolshevik satanic state" (his own term), was the most tortured victim among the Haykazunis.